ՍՏ. ԿՈՒՐՏԻԿՅԱՆ

ԱՐԵՎՈՏ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

Հայրենիք

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗЖЕ
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

891.99 | 10977
Ч-88 | Чուրիկյան, Սիր.
Արևմուտ թերակղզու Ճ.
Եր.
29/IV-24 | 215
4/III | 20
579

Зак. 32

891.99
Կ-88

ՍՏ. ԿՈՒՐՏԻԿՅԱՆ

ՍՍՌ-ԿԱՆ է 1961 թ.

ԱՐԵՎՈՏ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

А 55792



ՊԵՏՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1947

Շապիկը նկարիչ՝ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆԻ

СТ. КУРТИКЯН

На солнечном полуострове

(На армянском языке)

Армгиз, Ереван, 1947

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԻ ՀԵՏ

Գետափնյա օդանավակայանից ինքնաթիռը բարձրացավ գորշակապտավուն երկնակամարը և ցածրաչաց սկսեց թռչել դեպի արևմուտք։ Երիտասարդ ուղևորն աչքերը ներքև հառած՝ կարոտով դիտում էր դաշտանկարը. մուգ և բաց կանաչ անտառները, դալար մարգագետինները, զույգ հողմաղացները և գետի աղոտ-արծաթափայլ ժապավենը, որ ոլորապտույտ ու խաղաղ սահում էր անտառի և մարգագետնի կանաչ ծովի միջով։ Մթնշաղվող երկրում նա տեսնում էր վայրի բադերի երամներ, որոնք եղեգնուտներից դուրս գալով՝ գետի հոսանքով թռչում էին դեպի հարավ։

Հայրենի այս պեյզաժն անորոշ հուզումով էր լցրել ուղևորի սիրտը։ Մի գուցե նա ավելի շատ հուզված էր նրա համար, որ բաժանվում

էր հարազատ ափերից և իրեն բոլորովին անհայտ՝ ֆաշիստական տիրակալության տակ գտնվող մշուշապատ թերակղզին էր մեկնում։ Արդյոք ողջ կվերադառնա՞ այնտեղից և նորից կտեսնե՞ր իր ծննդավայրը՝ սիրելի լեռնաշխարհը, իր հարազատներին ու ընկերներին։

Ինքնաթիռը ավելի ու ավելի բարձրանալով՝ ճուլվեց երկնքի լազուրին, արագորեն անցավ ջրերի վրայով և հասնելով մոտակա թերակղզին՝ առաջացավ դեպի նրա կենտրոնական մասում գտնվող անտառային բացատը։ Այդտեղ երեք ոև կետեր բաժանվեցին օդանավից և սկսեցին իջնել բացատի վրա։ Մի քանի րոպեից հետո երեք պարաշյուտներ իջան կանաչ գետնի վրա ու երիտասարդ ուղևորն սկսեց իր վրայից արձակել պարաշյուտի ճգավոկները։ Ազատվելով պարաշյուտից՝ նա շտապ մոտեցավ քիչ հեռու ընկած մյուս պարաշյուտին, գործարար մարդուարագությամբ այն քանդեց, երկու ծանրոց վերցրեց և մտնելով անտառ, մի պահ ուշի-ուշով դիտեց շրջապատը։ Վստահ լինելով, որ ոչ-ոք չի նկատում իրեն՝ ծանրոցները խնամքով թաքցրեց խիտ մասրենիների մեջ։ Ապա շտապ վերադարձավ, վերցրեց գետնին ընկած մյուս պարաշյուտի ծանրոցները ևս ու թփերի մեջ բոլորը խնամքով տեղավորելուց հետո, սկսեց առաջանալ դեպի անտառի խորքը։

Խորհրդավոր ուղևորը հագիվ քսան տարեկան չիներ — ամբակազմ, թիկնեղ, խոշոր, սև աչքերով, պատանեկական կարմիր այտերով և թուխ դեմքով, որի վրա աչքի էր ընկնում արծվաքիթը։

Մի քիչ առաջանալով՝ երիտասարդը պառկեց գետնին, ծառերի ընների արանքից դիտեց շուրջը, լարեց լսողությունը, վտանգավոր ոչինչ չնկատելով՝ գրպանից հանեց մի փոքրիկ քարտեզ ու կողմնացույց, և, որոշելով իր ուղղությունը՝ խիտ ծառերի միջով շարունակեց ճանապարհը։

Շուտով մութը տարածվեց հնադարյան անտառում։ Մոտակա թփուտներն ու մացառուտները սև ուրվականների նման էին երևում։ Ուղևորին երբեմն թվում էր, որ այդ թփուտների ետևում մարդիկ են թաքնված, և ահա, հանկարծ հարձակվելու են իր վրա։ Սակայն նա, ավտոմատն ուսից կախ տված և ցուցամատը ատրճանակի ձգանին՝ շարունակում էր խորանալ անտառի մեջ, իր անցած ճանապարհին մերթ ընդմերթ նշաններ անելով ծառերի վրա։ Երբեմն կանգ էր առնում, ականջ դնում շրջապատին, և, լսելով միայն թռչունների հեռուներից հասնող ընդհատ ճիչերը՝ շարունակում էր իր անհայտ ճանապարհը։

Հանկարծ ուղևորը կանգ առավ՝ զովությունն զգալով քրտնած ճակատին։ Հասել էր մի ձորաբերան, և, եթե մի քանի անզգույշ քայլ ևս աներ, կարող էր քարափից գլորվել ձորը։ Այլևս հնարավոր չէր առաջ գնալ։ Ուղևորը որոշեց դիշերել հենց այդտեղ, թփուտների և ժայռերի արանքում։

Շուտով հոգնությունը հաղթեց նրան և նա քնեց։

Վաղ առավոտյան ձորամիջով փչող զովությունը արթնացրեց ուղևորին։ Նա սարսուռ զգաց ամբողջ մարմնով։ Շրջապատը խաղաղ էր։ Սվսվում էին տերևները և անտառից լսվում էր մի մեղմ երաժշտություն։ Ուղևորը դիտում և զննում էր ամեն ինչ։ Վաղորդյան կաթնամշուշը ծուլորեն ձորից վեր էր բարձրանում, իսկ դիմացը՝ ապառաժոտ լեռնագագաթները սուր ատամներով վեր էին խոյանում ապիտակ մառախուղի միջից։

Հանկարծ, խոր խաղաղության մեջ, հեռվից լսվեց պղնձյա զանգակիկների մեղմ ու դուրեկան մի ծլնգոց։ Ուրեմն, մոտիկ տեղանքում կամ խճուղի կար, կամ արահետ։

Ուղևորն իսկույն բարձրացավ ծառի վրա՝ այնտեղից դիտելու համար շրջապատը։ Հեռվում, լեռնալանջով ոլորվում էր արահետը,

որտեղից մի խումբ զինված մարդիկ էին անցնում՝ բեռնաբարձ ձիերով։

«Ռազմամթերք են փոխադրում. ուրեմն թշնամու կայազորը գտնվում է մոտակայքում», — մտածեց նա։ Հեռու իջավ ծառից, որոշեց նոր ուղղությունը և շարունակեց ճանապարհը։

Ավտոմատով զինված խորհրդավոր ուղևորն ամբողջ օրը թափառեց անտառում, փնտրելով մարդկանց, որոնց չէր գտնում։ Նա մոայլվել էր և մաշող հոգնություն էր զգում։

Այդ միջոցին մի հացենու վրայից պատանեկական մի զույգ աչքեր ուշադիր դիտում էին ուղևորին։ Արդյոք ո՞վ էր նա, ի՞նչ գործով էր այդտեղ հասել։

Ուղևորը կանգ առավ, ուսից հանեց ավտոմատը և քնելու համար տեղավորվեց թփուտների արանքում։

Պատանին ծառի վրայից աչքերը սևեռել էր անծանոթ մարդու վրա՝ տեսնելու համար նրա ամեն մի շարժումը։ Նա երկար դիտեց, մինչև որ մթնեց և այլևս ոչինչ չէր նկատում։ Այդ ժամանակ պատանին անաղմուկ իջավ ծառից և ընկավ մութերի մեջ։ Ո՛վ գիտե, ի՞նչ մարդ է նա։ Ինչպե՞ս պարզել։ Մի գուցե իրենցից է և իրենց է փնտրում։

Այս մտորումների մեջ պատանին որոշեց

թաքնվել մացառների արանքում և մոտիկից հետևել անծանոթ ավտոմատավորին։

Նա լուսացրեց անքուն, լսողությունը սրած։

Վաղ առավոտյան, աղջամուղջին, խորհրդավոր մարդը վեր կացավ, վիզն անցկացրեց ավտոմատը և ճանապարհ ընկավ դեպի անտառի խորքը, այն ուղղությամբ, որտեղ դաբավոր կաղնիները, կեչիները, հացենիներն ու լորենիները մագլցում էին դեպի ապառաժոտ լեռան բարձունքը։

Պատանին անմիջապես մոտեցավ այն թփուտին, որի տակ գիշերել էր երիտասարդ ավտոմատավորը։ Նա ուշադիր զննեց թփուտի շուրջը՝ որևէ իր — թեկուզ թղթի կտոր, հացի փշրանք, պահածոյի դատարկ տուփ գտնելու համար, որով հնարավոր կլիներ պարզել անծանոթ ուղևորի ինչ մարդ լինելը։ Բայց ոչինչ չգտնելով՝ մի պահ տխրեց, մնաց աչքերը գետնին հառած։ Եվ այդ միջոցին հանկարծ նրա աչքերը փայլեցին ուրախությունից։ Թփուտի մոտ նկատել էր ծխված գլանակի մնացորդները։ Նա զննեց ծխախոտի գլանակները և բերկրանքից բաբախեց սիրտը։ Այնտեղ կարդացել էր ռուսական մի քանի տառեր, իսկ մի գլանակի վրա՝ «Советский» բառը։ Ուրեմն այդ ծխա-

խոտը հալբենական արտադրանք էր և գործածողն էլ, ամենայն հավանականությամբ, կարող էր մեր մարդը լինել։

«Մի գուցե նա հատուկ նպատակով է ձեռք բերել «Советский» ծխախոտը», — հանկարծ ճառագայթեց նրա մտքում։ Եվ նա որոշեց ուղևորից անտես՝ հետապնդել նրան։

Ավտոմատավոր մարդը շեղվեց հակառակ ուղղությամբ։

Այդ ըոպեին պատանին որոշեց իր անելիքը։ Նա սկսեց սիրային մի երգ երգել։

Ուղևորը հանկարծակիի եկած՝ կանգ առավ, պատանուն նկատելով մոտեցավ և հարցրեց.

— Փոքրիկ ըարեկամ, ինչ ես անում այս անտառում։

— Գնում եմ մեր տնակը։

— Ձեր տնակը որտեղ է։

— Վերևում, — ցույց տվեց պատանին մատով։ Հետո ավելացրեց. — հայրս անտառապահ է. ուզում եք գնանք մեզ մոտ, մի քիչ հանգստացեք. որսորդները հաճախ են գալիս հանգստանում մեր տանը։

Ուղևորը համաձայնվեց։ Լավ է գնալ ու ծանոթանալ անտառապահի հետ. մի գուցե հնարավոր լինի նրանից որոշ բան իմանալ այն մարդկանց մասին, որոնց նա փնտրում էր։

— Իսկ ձեր տանը հիմա ովքեր կան, — հարցրեց անծանոթը։

— Միայն հայրս։

Ու նրանք երկուսով դնացին դեպի անտառի խորքը։ Պատանին երբեմն խորհում էր, որ իր ուղեկիցը կարող էր նաև լինել գերմանական լրտես, որ հետախուզական նպատակներով եկել էր այդտեղ, այնքան մոտ իրենց ճամբարին։

Երբ նրանք արդեն բավականին առաջացել էին, հանկարծ, մի մեծ կաղնու ետևից հայտնվեցին զինված մարդիկ և հրացաններն ուղղելով դեպի ավտոմատավորը, պահանջեցին անձնատուր լինել։ Այդ վայրկյանին անծանոթ մարդը տեսավ, որ իր ուղեկից պատանին ևս գրպանից հանել էր մի ատրճանակ և սպառնում էր իրեն։

Բայց ավտոմատավոր մարդը՝ խուճապի չմատնվեց, դիմադրության ոչ մի փորձ չկատարեց. ընդհակառակը, նա զոհունակությամբ ժպտաց՝ լսելով հարազատ ձայներ և տեսնելով իր պատանի ուղեկցի սպառնալի կեցվածքը։ Նրա աչքերը շողում էին առաջին հաղթանակի ուրախության։ Երկար թափառումներից հետո վերջապես նա գտել էր հարազատ մարդկանց, որոնց այնքան տագնապով փնտրում էր երեք օր շարունակ։

— Ա՜յ թե որտեղ է քո անտառապահ հոր տնակը։ Շնորհակալություն, փոքրիկ բարեկամ. դու ինձանից խորամանկ գտնվեցիր։ Այսուհետև քո «հոր տնակը» կլինի նաև իմ տնակը. իսկ այժմ խնդրում եմ ինձ առաջնորդիր շտաբ՝ «հորդ» մոտ, — ուրախ տրամադրությամբ ասաց ուղևորը պատանուն։

Մի քիչ հետո հրամանատարական քոդտիկում, պարտիզանների պետի առաջ կանգնել էին պատանի պարտիզանն ու նրա ուղեկիցը։ Վերջինն իր գլխարկի ծալքից հանելով մի փոքրիկ գրություն՝ երկարեց պարտիզանների հրամանատարին, որը կարդաց երկտողը և նրա աչքերը վառվեցին ուրախության փայլով։ Նա ջերմորեն սեղմեց խորհրդավոր մարդու ձեռքը և ապա շնորհակալություն հայտնեց փոքրիկ պարտիզանին՝ այդպիսի թանկագին «հյուր» բերելու համար։

Պարտիզանների պետի դունատ շրթունքները դողացին արտակարգ հուզումից ու երջանկությունից...

Զույգի անտառների այս բնակիչներն արդեն մի ամիս է սպառել էին իրենց սննդամթերքի և ռազմամթերքի բոլոր պաշարները։ Մարդիկ ուտում էին ծառերի կեղևները, խոտերը, կաշվեղեն իրեր և այժմ ուժաս-

պառ ընկել էին անտառային բարձունքում, նախընտրելով մեռնել քաղցից, բայց չհնազանդվել ֆաշիստ բռնակալներին։

— Ընկեր հրամանատար, — զեկուցեց նորեկը, — ինձ հետ միասին պարաշյուտով ցած է գցված երկու ռադիոապարատ և երկու հարյուր կիլո խտացրած սննդամթերք։ Խնդրում եմ ինձ մի քանի մարդ տրամադրեք՝ դրանք փոխադրելու համար։

... Երեկոյան պարտիզաններին բաժանվեց խտացրած սննդամթերքը, իսկ ժամը տասնինին՝ պարտիզանական շտաբի դեռ նոր տարքված ռադիոկայանը մայր երկրին հաղորդեց.

«Ղրիմում ապրում և գործում են ժողովրդական վրիժառուները. շտապ հասցնել ռազմամթերք և սննդամթերք՝ ուղղություն վերցնելով Զուայի անտառները»։

Այդ հաղորդումից քիչ անց՝ մայր երկրից ընդունվեց հետևյալ ռադիոգիրը.

«Հայրենիքը ողջունում է ֆաշիստների թիկունքում մարտնչող իր զավակներին։ Պատրաստեցեք պղպանշաններ. ինքնաթիռները շուտով կլինեն ձեզ մոտ»։

Այս առաջին ռադիոգիրը խորապես հուզեց անտառի մարդկանց։ Բերկրանքի արցունքներ երևացին նրանց փոս ընկած աչքերի մեջ...

Թավ մորուքով ու լայն, բարի դեմքով մի պարտիզան, որին ընկերները «Մեղվաբուլծ» էին կոչում, նկատի ունենալով խաղաղ ժամանակվա նրա զբաղմունքը, այլևս չկարողանալով զսպել իր ուրախությունը՝ փաթաթվեց առաջին պատահած պարտիզանին և սկսեց համբուրել.

— Կապրենք, եղբայրներ, կապրենք և գործ կկատարենք այսուհետև, — բացագանչում էր նա, հերթով գրկելով հանդիպածին և երջանկության ժպիտը աչքերին դիտելով իր շուրջը ցնծացող պարտիզաններին։

— Վերջապես փրկվեց անտառը, թե չէ «ապուր» ու «բորշչ» պատրաստելու համար կեղևաթափ էի անելու ամբողջ անտառը։ Այժմ, բարեկամներ, արդեն կարելի է «մենյուն» փոխել, — աշխույժ կատակեց պարտիզանների «գլխավոր խոհարարը», որի «մենյուն» ամիսներ շարունակ բաղկացած էր ծառերի կեղևներից, և խոտերից պատրաստած «ապուրից»։

Պարտիզանների պետը հրամայեց ամիջապես խարույկներ վառել անտառի մի քանի կետերում։

Ժամը 24-ի մոտ էր, երբ հեռուներից լսվեցին ինքնաթիռների խուլ ձայներ, որոնք հետզհետե մոտեցան խարույկներին։ Դա Հայրենիքի ձայնն էր, Հայրենիքի հոգեհույզ ող-

ջուլները։ Անտառի մարդիկ ցնծության մեջ էին և մոռացած ամեն մի զգուշություն՝ ուրախության ճիչեր էին արձակում։

Շուտով պարաշյուտների անձրև տեղաց խարույկների շուրջը։ 170 պարաշյուտ, խտացած սննդամթերքով ու ռազմամթերքով ցածրացան գետնի վրա։

Այդ անկրկնելի երջանկության պահին պարտիզանների պետը ոտքի բարձրացավ, մոտեցավ իրենց թանկագին «հյուրին» — երիտասարդ ռադիոտին, հավաքեց ուժերը և ամուր գրկեց նրան։

Ու ոչինչ չկարողացավ խոսել։ Հուզումից և հյուծվածությունից նա դողում էր։ Նրա դիմացը լուռ կանգնել էր խորհրդավոր ուղևորը՝ արծվաքիթ, թխահոն, սև ու խոշոր աչքերով երիտասարդը՝ կոմերիտական Նիկոլայ Գրիգորյանը։

* * *

Իսկ ինչ էր այն պատանին, որ Նիկոլայ Գրիգորյանին հանդիպեց անտառում և առաջնորդեց պարտիզանների մոտ։

...Հիշյալ դեպքից երկու օր առաջ պարտիզանական ջոկատի հրամանատար կոմերիտական Սաշա Վադնյովի մոտ բերին մի դժգույն ու վտիտ

պատանու, որի լայն ճակատի տակ փայլում էին կապույտ աչքերը։ Նա հագիվ տասնհինգ տարեկան լիներ։

— Ընկեր հրամանատար, — զեկուցեց հերթապահ պարտիզանը, — սրան բռնեցինք մի ծառի վրա. թաքնված՝ մեզ էր դիտում։ Հարցրեցինք, թե ով է և որտեղից է գալիս։ Պահանջեց, որ իրեն բերենք ձեզ մոտ։

Զնայած հոգնածությանն ու հյուծված լինելուն՝ պատանին իրեն պահում էր խրոխտ ու ձիգ։

— Նստիր, փոքրիկ, հոգնած, քաղցած կլինես։ Ուտել չե՞ս ուզում, — հարցրեց պարտիզանների հրամանատարը, ուշադիր դիտելով դժգույն պատանուն։

— Ուտել չեմ ուզում, ընկեր հրամանատար, — համարձակ պատասխանեց պատանին։

— Անունդ ի՞նչ է, փոքրիկ։

— Պիոներ Ալեքսանդր Բորիսով. բայց ինձ անվանում են Շուրա, — բարձրաձայն արտասանեց պատանին։

Պարտիզանական ջոկատի հրամանատարի դեմքին մի մեղմ ժպիտ խաղաց։

Հարցաքննությունը շարունակվեց ավելի մեղմ տոնով։

— Հորդ անունն ի՞նչ է։

— Սաեպան Բարիով, — համարձակ պատասխանեց պատանին։

Հրամանատարը զուրգուրանքով դիտելով նրան՝ շարունակեց.

— Որտեղից ես գալիս։

— Սիմֆերոպոլից։

— Իսկ որտե՞ղ էիր ուզում գնալ անատով։

Պատանին մի պահ լռեց, կարծես չանալով անվրդով ու կարճ արտահայտել իր միտքը։

— Երկու օր է փնտրում էի ձեզ։

— Ինչո՞ւ էիր ծառը բարձրացել։

— Դիտում էի, տեսնում մերոնք են, թե ուրիշները։

— «Մերոնք» ովքե՞ր են։

— Դո՛ւք ... դո՛ւք հենց մերոնք եք...

Ու հետո հրամանատարի բարի հայացքից քաջալերվելով, շարունակեց.

— Ես էլ եմ ուզում ձեզ հետ լինել, ընկեր հրամանատար...

Նա հայացքը հառել էր հրամանատարի աչքերին և կարծես անորոշ երկյուղ էր զգում։ Զլինի՞ հրամանատարն ասի՝ դու դեռ շատ փոքր ես. մենք ձրի հաց չենք կարող ուտեցնել. առայժմ գնա ծնողներիդ մոտ...

Պարտիզանական ջոկատի երիտասարդ հրա-

մանատաները պատանու աչքերում նկատեց այդ երկյուղը և ջերմորեն ասաց.

— Դու կմնաս մեզ մոտ, Շուրա, մեր ջոկատում, թեև պարտիզանի կյանքը ծանր կլինի քեզ համար...

Շուրան ոչինչ չէր լսում այլևս։ Ուրախությունից տրոփում էր նրա փոքրիկ սիրտը և եթե չքաշվեր՝ կընկներ հրամանատարի վզովը և պինդ կհամբուրեր նրան։

Այդ օրվանից պիոներ Ալեքսանդր Բորիսովը՝ Շուրան դարձավ «Հանուն հայրենիքի» պարտիզանական ջոկատի ամենակրտսեր անդամը։ Հենց այս Շուրան էր այն պատանին, որ Նիկոլայ Գրիգորյանին առաջնորդեց Զույալի անտառների պարտիզանների հրամանատարի մոտ։

5592

ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Վաղ առավոտյան, Շուրան վեր էր կացել իր խոտե անկողնից, գնացել ձորաբերանի մեծ ժայռի տակ, լվացվել ակնաղբյուրից և ուրախ տրամադրությամբ դիտում էր շրջապատը։ Անտառային բարձունքից, հաստաբուն ծառերի արանքից երևում էր կանաչ հովիտը և պարտեզներով շրջապատված մի փոքրիկ գյուղ, որի գլխին դեռ վաղորդյան կաթնամշուշն էր

լողում։ Անմիջապես մոտիկ մի փայտփորիկ կտցահարում էր ծառի կեղևը։ Ավելի հեռուն, հացենու ճյուղին թառած մի շատ փոքրիկ, դեղնավուն փետուրներով թռչուն արդեն սկսել էր իր դայլայլը։

Պարտիզաններին հետ մի տասին գիշերային քնից զարթնել էր անտառը։

Շուրան քայլում էր ցողոտ խոտերի վրա-լով, զննելով ամեն ինչ։ Մի լայն փոսում չորս-հինգ հոգի զբաղված էին կրակ վառելով և կաթ-սայի մեջ ջուր լցնելով։ Շուրան մոտեցավ։

Այդտեղ նոր վառված խարույկի մոտ, մի անակնկալ պատահեց նրան։

Երբ ջրից վերադարձավ խոհարարների օգնական փոքրիկ աղջիկը, Շուրային նկատե-լով, ամանները դրեց գետնին և վազեց նրա մոտ։ Նրանք ջերմորեն ողջագուրվեցին։ Երկուսի աչքերն էլ թրջվել էին ուրախության արցունք-ներով։ Շուրան բերկրանքով դիտում էր Ռի-մայի պայծառացած դեմքը, որի վրա երկու փոքրիկ, դուրեկան փոսիկներ էին գոյանում, երբ ժպտում էր։

— Այդ որտեղից, այդ ինչպես հասար մեզ մոտ, ինչպես հասար, Շուրկա, սիրելիս,— հուզ-ված կրկնում էր կապուտաչյա ու ոսկեծամ աղջիկը։

Շուրան անակնկալ երջանկությունից կորցրել էր իրեն։ Առակայծում էին նրա աչքերը։ Նա չէր կարողանում խոսել։

Նրան թվում էր, թե այդ բոլորովին անսպասելի հանդիպումը երազ է։ Այդ վայրկյանին նա հիշում էր, թե ինչպիսի քաղցր օրեր էին անցկացրել Ռիմայի հետ Արտեկի պիոներական ճամբարում, ինչպես միասին, մի խումբ իսպանացի ծնողազուրկ պիոներների հետ բարձրացել էին Այու Դաղի գագաթը և այնտեղ ծածանել պիոներական դրոշը։ Նա հիշում էր, որ Ռիմայի հետ միասին, հուլիսյան շոգ օրերին լողանում էին Սև ծովի կապույտ ջրերի մեջ։ Եվ ահա, այժմ, բոլորովին անսպասելի Ռիմային նորից հանդիպում էր անտառում, պարտիզանների մոտ...

— Այսուհետև միշտ միասին կլինենք չէ՞, Շուրկա, — ուրախ շշնջում էր աղջիկը։

Հետո նրանք գնացին մի ծառի տակ զբուցելու։

Ռիման Շուրային ծանոթացնում էր պարտիզանական կյանքին և պարտիզաններին։ Նա պատմեց պարտիզան Պավել Պետրովիչի մասին, որին «Ուրախ տղա» էին ասում ջոկատում՝ իր պատանեկական թեթևաշարժության և ուրախ, կատակասեր բնավորության համար։ Պատմեց

Իվան Ֆեդչենկոյի մասին, որին «Հայրիկ» էին անվանում՝ բոլորի հանդեպ ցույց տված իր հայրական հոգատարության համար։ Նա խոսեց լեյտենանտ Գեորգ Մաչինյանի մասին, որին ուղղակի «Թռչուն» էին անվանում՝ ծառի վրա պատրաստած իր սաղարթե անկողնում քնելու և մարտական խնդիրները թռչունի արագությամբ կատարելու համար։

Ռիման մեծ գովեստով պատմում էր պարտիզանների հրամանատարի մասին։ Ճիշտ այդ միջոցին հազի ձայն լսվեց. պարտիզանների հրամանատարն էր անցնում նրանց մոտով։

— Ա՛յ նա, — հանկարծ այնքան բարձրաձայն ասաց Ռիման, որ հրամանատարը լսեց, նա դարձավ, մոտեցավ նրանց ու հայրաբար հետաքրքրվեց նրանց վիճակով, հարցուփորձ արեց Շուրային և շոյելով նրա գլուխն, ասաց.

— Եղիր հոգդ արժանավոր զավակը։ Ստեպան Պետրովիչին ես ճանաչում եմ...

Եվ նա նորից հազալով հեռացավ ու անհայտացավ անտառի մեջ։

Շուրան երկար ու լուռ նայում էր պարտիզանների հրամանատարի ետևից։ Այդ պահին Ռիման ընկերոջ դեմքին նկատեց մի խոր թախիծ։ Ի՞նչ էր պատճառը, ինչո՞ւ Շուրան տխրեց։ Ինչո՞ւ լռեց։

Չէ՞ որ հրամանատարը ոչնչով չէր վիրավորել նրան. ընդհակառակը, գովել էր նրա վարմունքը և ցանկություն հայտնել, որ նա լինի քաղաքացիական կռիվների հերոս իր հոր արժանավոր զավակը։

— Ռիմա՛, ինչո՞ւ մեր հրամանատարն այնքան նիհար է, ինչո՞ւ այնքան վատ է հագնված, — տրտում հարց տվեց Շուրան՝ խզելով մի պահ տիրող լռությունը։

Ռիման հասկացավ Շուրայի տխրության պատճառը։ Այո՛, հրամանատարը քաղցից հյուծվել էր, այտոսկրները ցցվել էին մագաղաթի նման դեղնած դեմքի վրա, աչքերը փոս էին ընկել, իսկ մաշված կոշիկից երևում էին մատները...

— Որովհետև նա էլ սոված է, ինչպես բոլոր պարտիզանները, և նոր հագուստ չունի, ինչպես բոլորը, — պատասխանեց Ռիման, հետո ավելացրեց. — բայց նա ինչ եռանդուն է, անհանգիստ... Մի անգամ նրան ավել ճաշ էին տարել, այսինքն նա նկատել էր, որ եգիպտացորենի հատիկները շատ են ջրի մեջ, խիստ նեղացել ու ետ էր տվել ճաշը...

Այդ խոսակցության միջոցին նրանց մոտ հայտնվեց միջահասակից բարձր, թիկնեղ, բարի դեմքով, թուխ ու թավ բեխերով մի մարդ — քեռի Սամչուկը։

— Բարի օր, զավակներս, — ասաց նա տեղավորվելով նրանց մոտ, — այս օր նորից ազատ եմ, կարդալություն եկավ, թե՝ շատ ես հոգնել, հանգստացիր, էլի ճաշ չի լինելու։

Հետո՝ Շուրային դառնալով՝ հարց տվեց.

— Նու, որդյակս, ինչպես են քաղաքում գործերը, երշիկագործներ շատ կան։ Դե, ասենք մի հաշիվ է, — առանց պատասխանի սպասելու շարունակեց նա, — ինչքան շատ լինեն, այնքան շատ էլ մյուս աշխարհն են գնալու, մեկ էլ Գերմանիան չեն տեսնելու...

Ապա քեռի Սավչուկը պատմեց, թե ինչպես նախորդ օրն իրեն հաջողվեց բռնել մոտոցիկլետով արագ սլացող գերմանացի սպային և նրա թիկնապահին։

— Բայց ինչպես կանգնեցրիք մոտոցիկլետը, քեռի Սավչուկ, հետաքրքրվեց Ռիման։

— Հնարամտությունով, — պատասխանեց նա խորամանկորեն ժպտալով։ — Այն, ինչ որ չի կարելի մի ամբողջ վաշտով կամ գումարտակով կատարել, հնարամտությունով հնարավոր է գլուխ բերել։

Ու նա բացատրեց, թե ինչպես մոտոցիկլետի մոտեցած ժամանակը խճուղու երկու կողմը թաքնված չորս պարտիզաններ հանկարծ մի քիչ վեր բարձրացրին մինչ այդ ճանապարհի

վրա ձգված մետաղե թելը, որին սլացող մոտոցիկլետը՝ ուժեղ խփվելով շուռ եկավ և գերմանացի սպան ու թիկնապահը փռվեցին պարտիզանների առաջ։

— Ես ձեզ կպատմեմ մի ուրիշ հնարամտության մասին, որ անհրաժեշտ եղավ գործադրել «լեզու» բռնելու համար, — ասաց փորձված հետախույզը։

— Մի անգամ, — սկսեց նա, — այսպիսի դեպք պատահեց։ Մեր պաշտպանությունը թշնամու ամրություններից բաժանում էր ոչ այնքան մեծ մի գետ։ Ավագ լեյտենանտ Պետրովը մեր տղերքի մոտ եկավ, թե՝ անպայման պետք է «լեզու» բռնել։ Ճիշտն ասած՝ բավականին դժվար գործ էր գետն անցնելը և ֆրիցը բռնելը, որովհետև ափից քիչ հեռու կար գերմանական մի ԴՕՏ — երկաթով ու ցեմենտով սարքված մի ամրություն ու կրակակետ, որտեղից միշտ հսկում էին գետի վրա։ Ոչ մի կերպ հնարավոր չէր գետն անցնել և «լեզու» բռնել։ Բայց ինչ էլ որ լիներ, հրամանը պետք է կատարվեր։ Սա հո պատերազմ է և ոչ թե տուն, որ ուզածդ կատարես, չուզածդ՝ ոչ։

Եվ ահա, տղերքը գիշերը փորձեցին անցնել գետը. սակայն անքուն ֆրիցները հրթիռներով լուսավորեցին գետանցը և ուժեղ կրակ բացին։

Տղերքը ստիպվեցին եռ դառնալ. սերժանտ Եֆիմովն ու Մորոզովն էլ իզուր վիրավորվեցին։

Կես գիշերին գեսանցելու մի փորձ էլ արին տղերքը, բայց նորից հայտնաբերվեցին ու անհաջողության հանդիպեցին։ Դրա համար հրամանատարությունը, ինչպես հարկն է, հուպ էր տվել մեր ավագ լեյտենանտին։ Տեսնեմ՝ նա քրտնած շտաբից վերադարձավ մեզ մոտ և ինձ մոտենալով ասում է.

— Խայտառակվեցինք, Պյոտր, խայտառակվեցինք։ Բա ուր մնաց քո գվարդիայի ավագ լինելը...

— Ոչինչ, ընկեր գվարդիայի ավագ լեյտենանտ,—պատասխանում եմ,—ամեն ինչ լավ կլինի։

— Ինչպե՞ս,—հարցնում է։

— Ինչպե՞ս։ Ես արդեն մտածել եմ. «լեզուն» վաղը կլինի այստեղ։

— Իսկ ինչպե՞ս ես անցնելու գետը,—աշխուժացած հարցնում է նա։

Ասում եմ՝ գետը չեմ անցնելու, այլ «լեզուն» իր ոտքով այն ափից գալու է այս ափը։

Գվարդիայի ավագ լեյտենանտը մի պահ անխոս նայում է իմ աչքերին։

— Բայց ինչպե՞ս «լեզուն» իր ոտքով կգա.

այդպիսի բան չի լինի, — ընդմիջում են մինչ այդ լուռ լսող Շուրան ու Ռիման։

— Եվ այդպիսի բան եղավ. ահա թե ինչպես, — աչքերը կկոցելով և խորամանկորեն ժպտալով շարունակում է նա։

— Ես գվարդիայի ավագ լեյտենանտին ասում եմ, որ այս անգամ «լեզու» բռնելուն պետք է մասնակցեն չորս հոգի և մի ընտանի բադ։

— Մի ընտանի բադ, — կասկածանքով կրկնում է նա։

— Այո, ընտանի բադ. և այդ բադն է լինելու գլխավոր հերոսը, — ավելացնում եմ ես և գվարդիայի ավագ լեյտենանտին պատմում՝ ամբողջ գիշերը մտածածս պլանի մասին։ Նա ուրախությունից փաթաթվում է ինձ ու բացագանչում.

— Այդ հրաշալի միտք է, հրաշալի, կեցցես դու Պետյա, կեցցես։

Լուսադեմից առաջ ես, Վասյան, Արսենն ու Մորոզովը մտնում ենք գետափնյա եղեգնուտների մեջ և լավ քողարկվում. բադը իմ ձեռքումն է. ոտից կապել եմ երկար թել, այնպես, որ եթե գետի մեջ թողնեմ, կարողանա ութտաս մետր լողալ։ Զմռռացա թելի վրա ամրացնել մի քանի փոքրիկ քար, որպեսզի թելը իջնի ջրի տակ և չնկատվի։

Կամաց-կամաց լուսանում է։ Ես եղեգների արանքից նկատում եմ, որ զարթնում են ֆրիցները և դուրս են գալիս դռից։

Տեսնում եմ, նրանցից երկուսը զինված մոտենում են գետափին՝ լվացվելու։ Այդ միջոցին գետի մեջ բաց եմ թողնում բադը։

Գետափին մոտենալով՝ ֆրիցները նկատեցին ջրի վրա լողացող բադը։

«Լավ նախաճաշ կլինի» — երևի մտածեցին նրանք, — չէ որ ֆրիցները շատ են սիրում բադ ու հավ—և ավտոմատից կրակեցին։ Բադը խփվեց։ Այդ միջոցին ֆրիցներից մեկը մերկացավ ու նետվեց գետի մեջ՝ որսի ետևից։ Նա լողում էր ուղիղ դեպի մեր թաքստոցը։

— Տղերք, — շշնջացի ես, — հիմա նա կմոտենա մեզ. ես և Վասյան վրա կտանք, իսկ դուք՝ Մորոզով և Արսեն, կկրակեք նրա ընկերոջ վրա։

Ֆրիցը լողալով մոտենում է սպանված բադին, իսկ ես կամաց-կամաց քաշում էի բադի ոտից կապած թելը։ Կարծելով, որ ջուրն է քաշում սպանված բադին՝ ֆրիցը հեսգհետև մոտենում էր մեզ։ Նա արդեն մեզանից ընդամենը երեք մետր հեռավորության վրա էր։ Շունչները պահած՝ հագիվ էինք զսպում մեզ։ Վասյան սպասում էր իմ ազդանշանին՝ ֆրիցի վրա

խոյանալու համար։ Նա համբերությունից դուրս էր եկել և անընդհատ սեղմում էր ոտքս։ Եվ երբ Ֆրիցին մեզանից բաժանում էր ընդամենը մետր ու կես տարածություն ու նա երջանիկ էր, որ բռնել է բաղը և մտքում արդեն լափում էր համեղ որսը, Վասյան և ես ընկանք նրա վրա ու վզակոթին տալով, քաշեցինք եղեգնուտի մեջ։

Գետի մյուս ափին սպասող ընկերոջը չհաջողվեց կրակել մեզ վրա։ Ավտոմատային մի կրակահերթով Արսենը նրան գլորել էր գետի մեջ։

Այսպես, վերջնականապես փակվեց Ֆրիցի բաղ ուտելու ախորժակը, և մենք «լեզուն» որսացինք, թեև իմ խեղճ թոչունն էլ զոհվեց մարտական առաջադրանքը կատարելիս, — վերջացրեց իր պատմությունը գվարդիայի ավագ՝ հետախույզ Պետյա Սավչուկը և մի պահ լուռ ու ինքնագոհ դիտելով Ռիմային և Շուրային, աշխույժ ավելացրեց.

— Դե, սիրելիներս, այժմ դուք հավաքեցեք ձեր հնարամտության պաշարը. տեսնենք ինչպիսի հետախույզներ եք լինելու։

Շուրան և Ռիման ուրախ ժպտացին,

ԱՆՀԱՅՏԱԾՈՒՄ

Պարտիզանների հրամանատարն արդեն մի շաբաթ էր, որ հիվանդ և կիսաքաղց պառկել էր խոտե անկողնում։ Նրա մոտից դուրս գալով՝ բժշկական քույրն ասաց.

— Հրամանատարի կյանքը վտանգված է. միայն սուլֆիդինը և ուժեղ սնունդը կարող են փրկել նրան։

Շուրան խորապես ազդվեց բժշկական քրոջ հայտարարությունից։

Մոռենում էր կեսօրը։ Շուրան և Ռիման ղնացին չոր ցախ հավաքելու՝ եգիպտացորեն խաշելու համար։

— Ռիմա, գիտե՞ս, որ հրամանատարը ծանր հիվանդ է, — տխուր շշնջաց Շուրան՝ հավաքած ցախերը դարսելով պարանի վրա։

— Գիտեմ, առավոտյան քեռի Սավչուկն ասաց։

Հետո նրանք ցածը ձայնով ինչ-որ բան պայմանավորվեցին ու ցախերը շալակած ճամբար վերադարձան։

Սկսվեց ռազմական պարապմունքը։ Պարտիզան Իվան Ֆեդչենկոն ցույց էր տալիս հրացանի նյութական մասերը, հրացանը քանդելն ու հավաքելը։ Շուրան և Ռիման ուշադիր լսում

էին նրան՝ որպեսզի նյութը գերազանց յուրացնեն։

Կեսօրից հետո սկսեց անձրևափոշի մաղվել և մառախուղը հեռզհետե թանձրանալով՝ նըստեց անտառի վրա։ Օրը մռայլ էր։

Գիշերն ստուգման ժամանակ պարզվեց, որ Շուրան չկար։ Մի գուցե հատապտուղ փնտրելիս մոլորվել էր անտառում։ Բայց այդ քիչ հավանական էր ճարպիկ և ուշիմ Շուրայի համար, որը գիտեր անտառի ամեն մի ծառն ու թուփը։

Պատանի պարտիզանի անհայտանալը մտատանջություն պատճառեց բոլորին և առիթ տվեց զանազան կարծիքների։

— Պարզ բան է, փոքր էր, չդիմացավ դժվարություններին ու ճղեց, — ասաց Աթանաս Եգորովիչը, որին պարտիզանները ծաղրաբար «Մուդրեց» էին կոչում՝ ամեն ինչում գիտուն ձևանալու համար։

— Բայց ինչու հենց այսօր ճղեց, անձրևային եղանակին, — «Մուդրեցին» առարկեց հին պարտիզան քեռի Սիմյոն Մակսիմիչը։

— Իսկ չե՞ք կարծում, որ ձեր այդ խելոք ճուտիկը թշնամու գործակալն էր և իր գործը տեսավ, ծանոթացավ ամեն ինչին ու ահա հանկարծ ծլկվեց, խաբելով մեզ բոլորիս, — եզրակացրեց մի երրորդ պարտիզան։

Լսելով նրան՝ Ռիման հուզվեց։ Նրա մեջ բուռն ցանկություն առաջացավ խոսել և ինչպես հարկն է վիրավորել այդ «իմաստունին», բայց նա զսպեց իրեն և լուռ, արհամարհական մի հայացք ձգեց նրա վրա։

Սակայն մեծամասնությունը պաշտպանեց պատանուն։

Շուրայի անհայտացման մասին զեկուցեցին պարտիզանական շտաբին։

Շտաբի պետը հրամայեց խնդրել և նրա վինտրել անտառի մերձակայքը, մտածելով, որ դժբախտ դեպք պատահած կարող է լինել պատանու հետ։ Բայց գիշերային երկար որոնումները ոչ մի արդյունք չտվին. բոլոր որոնողներն էլ վերադարձան առանց Շուրայի։

... Բացվեց ուշ աշնան առավոտը։ Արևի ճառագայթները թափանցելով սաղարթների միջից՝ արծաթազօծել էին հինավուրց անտառը։ Թռչունները ուրախ երգելով՝ լողում էին արևի ոսկեշող ճառագայթների մեջ։

Դուրեկան ջերմություն զգացին գիշերային ցրտից սառած պարտիզանները և աշխուժացան։

Քողտիկի մեջ հիվանդ պառկած պարտիզանների հրամանատարն աչքերը բաց անելով՝ հարց տվեց իր շտաբի պետ Սարգսյանին, թե ինչ լուր կա Շուրայից։

— Ոչ մի լուր, — մռայլվեց Սարգսյանը։

— Մեկ էլ փնտրեք ձորաբերանը, քարափը,—շշնջաց հիվանդը։

*
* *

Երկու օր էր անցել Շուրայի խորհրդավոր անհայտացումից, բայց նրանից ոչ մի լուր չկար։ Հետախուզությունից վերադարձող պարտիզանները գեկուցեցին միայն, որ նախորդ օրը մի խումբ ֆաշիստներ անցել են անտառի մերձակա խճուղով, կանգ են առել ճանապարհի եզրին գտնվող վիթխարի կաղնու տակ, պատսպարվել են անձրևից և ճաշել։ Այդ էին վկայում մսի պահածոների տուփերը և գերմանական ծխախոտի նոր դյված մնացորդները ծառի չորս բոլորը։

Շտաբում լուրջ կասկածների մեջ ընկան։ Շուրան կարող էր հիտլերականների ձեռքն ընկած լինել, որովհետև նրա անհայտացումը զուգադիպում էր անտառի մերձակայքով նրանց անցնելուն։

Այդ կասկածների մասին շտաբի պետը ոչինչ չգեկուցեց հիվանդ հրամանատարին՝ նրան ավելորդ հուզում չպատճառելու համար։

Մի օր, վաղ առավոտյան, երբ պարտիզանների հիվանդ հրամանատարը բացեց ներ-

մութլունից կարմրած աչքերը, զարմանքով տեսավ կողքին մի ծանրոց։ Նա կամաց, ուժասպառ ձեռներով բաց արեց խորհրդավոր ծանրոցը։ Այնտեղ կային խտացրած կաթ, շաքար, պաքսիմատ, կարագ, տղամարդու մի զույգ կոշիկ և հագուստ։

Որտեղից էր այդ բոլորը, ով էր բերել։ Հանելուկը մնում էր անլուծելի՝ մատանջելով մենակ պառկած հիվանդին։ Կոշիկի մեջ հանկարծ նրա ուշադրությունը գրավեց մի փոքրիկ, թիթեղե տուփ։ Ձեռքը երկարեց տուփին և բացեց կափարիչը։ Սպիտակ թղթե փոքրիկ ծրար կար մեջը։ Հիվանդը շուռ տվեց թուղթը և ծրարի վրա կարդաց մի մակագրություն։ Ուրախության հուզումից փայլեցին նրա աչքերը։ Բայց ի՞նչ էր նշանակում այս բոլորը։ Ո՞վ, որտեղից կարող էր բերել այդ։ Ո՞վ էր նա, որ ուզում էր փրկել իր կյանքը։

Այդ մտորումների մեջ էր հիվանդը, երբ նրա մոտ եկավ շտաբի պետ Սարգսյանը և զեկուցեց, որ ուշ գիշերով Շուրան ճամբար է վերադարձել ամբողջովին թրջված ու ցեխոտված և այժմ քնել է մի քողտիկում, բայց հիմա կզարթեցնեն՝ լիմանալու համար անհայտացման պատճառը և պատասխանատվության կկանչեն պարտիզանական կարգապահությունը

խախտելու, ինքնական կերպով բացակայելու համար։

— Հանգիստ թողեք տղային. թող քնի, հեռվից է եկել, — շշնջաց պարտիզանների հրամանատարը, և Սարգսյանը զարմանքով նկատեց, որ հուզումից լցվել էին հիվանդի փոս ընկած աչքերը և նրա մշուշոտ հայացքը սեվեռած էր փոքրիկ ծրարին, որի վրա աշակերտական ձեռագրով գրված էր՝ «Սուլֆիդին»։

ԹՇՆԱՄՈՒ ՕՂԱԿՈՒՄ

Պարտիզանները խորտակել էին Թշնամու ապրանքատար գնացքը և ոչնչացրել ավտոշարասյունը։ Գերմանացիները դադարել էին։

Մի քանի օր շարունակ դաժան կռիվներ էին տեղի ունենում պարտիզանների և ֆաշիստական պատժիչ զորամասերի միջև։

Թշնամին համառորեն մոտենում էր № 1025 անտառային բարձունքին՝ պարտիզաններին հետզհետե առնելով սեղմվող օղակի մեջ։ Դրությունը քանի գնում՝ անելանելի էր դառնում։ Արդեն բոլորովին սպառվել էր սննդամթերքը և ավտոմատները մնացել էին առանց փամփուշտի։ Ով մի փամփուշտ և նռնակ ուներ, թաքցնում էր։ Մյուս կողմից սովը տանջում

էր մարդկանց։ Այլևս անհնարին էր այդ բարձունքում մնալ։

Հրամանատարը պարտիզաններին բացատրելով ստեղծված դրությունը՝ ասաց.

— Միակ ելքը՝ թշնամուն հանկարծակի բերելով՝ դիշերը պաշարումից դուրս գալն է։

Հրամանատարը մի պահ լուռ դիտում էր սակրացած դեմքերով պարտիզաններին։

Հետո նա շարունակեց.

— Իսկ ո՞վ հանձն կառնի թշնամուն պահել իր կրակով...

— Ե՛ս, ընկեր հրամանատար, — միաժամանակ լսվեց երկու հոգու ձայն։

Հպարտ ու ձիգ կանգնած էին սևաչյա, բրոնզագույն դեմքով մի կոմերիտական՝ լեյտենանտ Գեորգ Խաչինյանը, իսկ նրա մոտ՝ աղվամազը դեմքին՝ մի պատանի՝ Շուրան։

— Ե՛ս, ես, — կրկնվեցին ձայները։

Ընտրությունը շուտ կատարվեց։

— Ձեզ եմ հանձնարարում, ընկեր Խաչինյան, — լսվեց հրամանատարի կարճ վճիռը։

Շուրան մռայլվեց։ Անխոս՝ նա հայացքը հառել էր դեռնին։ «Ինձ դեռ փոքր են համարում ու չեն ուզում հաշվի առնել, չեն վստահում» — մտածում էր նա։

Հրամանատարը կռահելով Շուրայի միտքը՝

մոտեցավ նրան, շոյեց նրա ոսկեծաղ գլուխը և փաղաքշական ձայնով շշնջաց.

— Շուրիկա, սիրելիս, դու դեռ ժամանակ կունենաս կռվելու։

Ապա շարունակելով ուշադիր դիտել նրա խոժոռած դեմքը՝ ավելացրեց.

— Բայց քեզ էլ հանձնարարում եմ հավաքել պարտիզանների մոտ մնացած փամփուշտներն ու նռնակները և հանձնել Գրիշային։

Պարտիզանների թաքցրած «հոգեպահուստ» փամփուշտներից գոյացավ տասներեք սկավառակ փամփուշտ և երկու տասնյակից ավելի նռնակ։

Կես գիշերն անց էր, սակայն պարտիզանները չէին քնում։ Նրանք մի պահ վերհիշում էին երեկվա խաղաղ ու երջանիկ կյանքը, մտածում էին այս դաժան գիշերվա մասին ու երազում այն պայծառ, արևշող ապագան, որը անպայման պիտի գար՝ հաղթանակի թևերով...

Հանկարծ, գիշերային խոր խաղաղության մեջ լսվեցին ավտոմատային կրակահերթի և նռնակների պայթյունները։

Այդ՝ լեյտենանտ Խաչինյանի ավտոմատն ու նռնակներն էին աղդանշում։ Հետո, խավար անտառում, հարյուրավոր կոկորդներից հնչեց հզոր, ցնցող «ուռա»-ն։

Ընդհանուր այդ թոհ ու բոհից ֆաշիստները դարձնելով՝ դեռ քնաթաթախ մտածեցին, թե պարտիզաններին օգնություն են հասել այլ ջոկատներ, խավարի մեջ, խուճապի մատնված՝ փախուստի դիմեցին, յուրաքանչյուրը փորձելով փրկել իր կյանքը։

Ճեղքվեց պաշարման օղակը. պաշարումից դուրս եկան նախ վիրավորները, ապա մյուս պարտիզանները։ Նրանք հետզհետե հեռացան։

Քիչ անց անտառում թշնամու դեմ մենակ մնացած Մաչինյանը նկատեց, որ մեկը, ծառերի արանքով մոտենում է իրեն։ Ո՞վ կարող էր լինել։ Նա թաքնվեց մացառուտի արանքում և ատրճանակը պատրաստ պահեց ձեռքում՝ կրակելու։ Ուրվականը հետզհետե մոտեցավ նրան։ Վերջապես նա ճանաչեց Շուրային։

— Իսկ դու ինչու ես մնացել, Շուրա, — հանդիմանեց նա պատանի պարտիզանին։

— Ընկեր լեյտենանտ, թույլ տվեք օգնել ձեզ, — խնդրեց նա։

Լուսադեմից առաջ լեյտենանտը Շուրային հրամայեց մենակ թողնել իրեն և հասնել նահանջող պարտիզաններին։

— Իսկ դուք, — ընկեր լեյտենանտ, — հարցրեց Շուրան։

— Ես մի քանի ժամ ևս պետք է մնամ, որպեսզի թշնամուն թույլ չտամ հետապնդել մերոնց։

— Ես չեմ կարող ձեզ մենակ թողնել, ընկեր լեյտենանտ,—թախանձեց Շուրան։

Կոմերիտական հրամանատարը հուզված փոքրիկ պատանու վերաբերմունքից՝ գրկեց, համբուրեց նրան և մեղմ շշնջաց.

— Շուրա, սիրելիս, մեզ համար շատ թանկ արժե ամեն մի պարտիզանի կյանքը։ Մենք անօգուտ զոհեր չպետք է տանք, մանավանդ, որ դու փամփուշտ էլ չունես կրակելու։ Հրամանատարին էլ տեղեկացրու, որ թշնամին առայժմ չի հետապնդում իրենց։ Դեհ, շուտ հեռացիր, ժամանակ չկա։

Արցունքն աչքերին Շուրան ենթարկվեց հրամանատարին ու անհայտացավ մթնշաղ անտառի մեջ։

Նա քայլում եր մտամոլոր, կսկծացող սրտով։ Վիշտը բարձրանում էր մինչև նրա կոկորդը և սեղմում այն։ Ինչպես ինքը համաձայնվեց մենակ թողնել լեյտենանտին՝ ֆաշիստական մի ամբողջ ոհմակի դեմ։

... Վաղ առավոտյան, երբ աղջամուղջը պարզվեց, հիտլերականները գրոհի անցան։ Մաչինյանն ավտոմատային կրակով և հաճախ նռնակամարտի բռնվելով՝ երկար ժամանակ թշնամուն չէր թողնում առաջ շարժվել իր ընկերների թարմ հետքերով։ Նա հաճախ փո-

խում էր իր դիրքը, կրակում էր զանազան կողմերից, այդպիսով թշնամուն հավատացնելով, թե կռվում են բազմաթիվ պարտիզանները։

Առավոտյան արդեն ապահով տեղ էին հասել ժողովրդական վրիժառուները և նրանց ետևից՝ նաև Շուրան։ Ռիման նրան հանդիպեց մեծ ուրախությամբ։ Բայց Շուրան տխուր էր և դատապարտում էր իրեն, որ մահու և կենաց վայրկյանին լեյտենանտին թողել էր մենակ։

Անցավ երկու օր և պարտիզաններին այլևս ոչ-ոք չէր հետապնդում։ Պարզ է, որ ֆաշիստները կորցրել էին նրանց հետքերը։

Բայց չկար պարտիզանական ջոկատի ազատարար՝ լեյտենանտ Մաչինյանը։

Բոլորին հուզում էր մի միտք—արդյոք ողջ էր լեյտենանտը։

Շտաբում որոշում կայացվեց՝ մի խումբ պարտիզանների հետախուզություն ուղարկել այն վայրը, որտեղից նահանջել էին պարտիզանները։ Հետախուզության գնացողների հետ էր նաև Շուրան։

Վաղ. առավոտյան հետախույզների խումբը հասել էր պարտիզանների նախկին ճամբարը։ Բայց լեյտենանտից ոչ մի հետք չկար։ Ծառերի տակ թափված էին մրգի ու մսի պահածոյի տուփեր, ծխախոտի գլանակներ։ Նրանք գտան

մի լուսանկար, որը հանվել էր Յալթայում և ներկայացնում էր մի ցուցափեղկ, որի մեջ ձեռները և ոտները կապված պարտիզանուհի կար։

Պարտիզանները վաղուց գիտեին այդ ցուցափեղկի պատմությունը։ Յալթայում, «Լենինգրադ» հյուրանոցի մոտ, գերմանացիները սարքել էին այդ յուրահատուկ ցուցափեղկը, որտեղ ցուցադրում էին Ղրիմի պարտիզաններից իրենց ձեռք բերած «ռազմատվարը» — պարտիզանների կտրված գլուխներ, ձեռքեր, ոտքեր, հագուստ ու զենք։ Իսկ մի անգամ էլ ցուցադրել էին կապկպված մի երիտասարդ պարտիզանուհու։

Գերմանացին իր համար հաճոյալի այդ տեսարանը նկատելով՝ նկարել էր և ահա անընդհատ գրպանից վայր էր գցել անտառում։

Մի ուրիշ ծառի տակ պարտիզան — հետախույզները գտան մի փոքրիկ գրքույկ, որի վրա գրված էր. «Գերմանա-ռուսական համառոտ բառարան»։ Մթթե կռվելու հետ միաժամանակ հիտլերականները ցանկանում էին ուսումնասիրել ռուս լեզուն։ Նման բան չէր էլ կարելի երևակայել։

Հետախույզներին խիստ հետաքրքրում էր «Գերմանա-ռուսական համառոտ բառարանի» նպատակը։

Թերթելով բառարանը՝ պարտիզաններն անմիջապես իմացան դրա միակ նպատակը։ Բառարանում ընդամենը կար 63 բառ, որից 42-ը վերաբերում էին ուտելուն, խմելուն, խրախճանքներ սարքելուն և բնակարաններ թալանելուն, իսկ 21-ը վերաբերում էին այդ բոլորը կատարելու համար անհրաժեշտ ճանապարհագիտության։ Բառարանում չկար «կարելի է», «խնդրեմ», «թույլ տվեք», «վաճառեցեք», «շնորհակալություն» կամ «բարի լույս», «բարի երեկո» բառերը, որոնք առհասարակ լինում են ամենահամառոտ խոսակցական բառարանների մեջ անգամ։

Հետախույզները հասկացան, որ այդ բառարանը լեզվական մի ուղեցույց էր կողոպտիչների համար։

— Ոչինչ, մենք նրանց կսովորեցնենք նոր բառեր։ Նրանք շուտով կհասկանան, թե ինչ է նշանակում՝ «մահ գերմանական զավթիչներին» բառերը,—գայրացած բացականչեց պարտիզան Ցեդչենկոն։

Կես օրին հետախույզները հասան անտառապատ լեռան արևմտյան լանջին գտնվող մի բացատ և հուզված կանգ առան բացատի կենտրոնում գտնվող մենավոր ծառի առաջ։ Նրանք տեսան ծառից կախված մարդկային մի դիակ,

որին առաջին հայացքից դժվար էր ճանաչել։ Նրա դեմքն այլանդակված էր դաշույնի հարվածներով, թևերը ջարդված էին, աչքերի տեղ մնացել էր երկու մութ խոռոչ։ Իսկ մերկ կրծքի վրա դաշույնով փորված էր հինգթև աստղ և, արյունով գրված էր մի բառ՝ «պարտիզան»։

Շուրան և մյուս պարտիզանները վերջապես ճանաչեցին Խաչինյանին, հանեցին գլխարկները և լուռ խոնարհեցին իրենց գլուխները դյուցազնի մահով զոհված հերոսի առաջ։ Ապա ընկերները, վշտից մորմոքուն սրտով ցած բերին նվիրական դիակը, դարավոր կաղնու տակ թաղեցին։ Խաչինյանի հուշարձան-ծառի վրա փորագրեցին.

«Այստեղ թաղված է Ֆաշիստների կողմից գազանաբար խոշտանգված՝ պարտիզանների ադատարար՝ լեյտենանտ Գևորգ Խաչինյանը։ Հավերժ կապրի նրա հիշատակը»։

Թարմ հողաթմբի առաջ բոլորը կանգնել էին լուռ ու վշտահար։ Շուրայի աչքերը լցվել էին արտասուքով և նա հագիվ էր զսպում հեկեկանքը։

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐՈՂ

Պարտիզանական շտաբում տեղեկություն ստացվեց, որ Զուլա շրջանային կենտրոնը պահպանող հիտլերյան կայազորը բաղկացած է մի

գումարտակից։ Որոշվեց գրոհել շրջկենտրոնի վրա, ոչնչացնել կայազորը, տիրել նրա ռազմամթերքին ու սննդամթերքին։

Գործողության ձեռնարկելուց առաջ հարկավոր էր մանրամասն հետազոտել կայազորի դասավորումը, իմանալ ո՞ր շենքում և ինչքան մարդ է գիշերում, գնդացիրները և ռազմամթերքի պահեստը որտե՞ղ են գտնվում, ե՞րբ է գիշերային դաղտերքի ժամը, գրոհի ամենանպաստավոր ժամանակը, կայազորը նոր հանձնարարում ստացե՞լ է թե ոչ և հետախուզական այլ տվյալները, որոնք վճռելու էին գրոհի հաջողությունը։

Ո՞ւմ ավելի նպատակահարմար էր ուղարկել հետախուզության։ Այդ մասին էին մտածում շտաբում։

— Ինձ և Ռիմային, ընկեր հրամանատար. մենք երկուսս էլ փոքր ենք և մեզ վրա չեն կասկածի ֆաշիստները,— աշխուժ ասեց ընկավ Շուրան։

Հետևյալ օրը Շուրան և Ռիման գիշերով ճանապարհ ընկան Զույայի անտառներով։ Նրանց հոգում թաքուն ուրախություն կար, որ այս անգամ միասին էին գնում՝ մարտական առաջադրանք կատարելու, բայց իրար ոչինչ չէին ասում։

«Ինչպիսի բարեբախտ զուգադիպություն,

որ Շուրայի հետ եմ հետախուզության գնում»
—մտածում էր Ռիման, առանց իմանալու, որ
այդ հրամանը Շուրայի խնդրանքով էր տրվել...

Ինչ անտառով նրանք արդեն անցել էին
երկու ժամվա ճանապարհ, երբ սկսեց տեղա-
տարափ անձրևը։ Նրանք կանգ առան մի մեծ
փշակավոր ծառի առաջ և որոշեցին միառժա-
մանակ պատսպարվել փշակի մեջ։ Այստեղ
Ռիման և Շուրան սկսեցին վերհիշել դեռ շատ
մոտիկ անցյալը, Սիմֆերոպոլի իրենց տան-
նամյակը, սիրելի դասատուներին և քառասուն
թվականի օգոստոս ամիսը, երբ նրանք միա-
սին գտնվում էին Այու Դաղի ստորոտում, խա-
ղաղ ջրերի ափին ձգված պիոներական ճամ-
բարում։ Նրանց մտապատկերում վերակենդա-
նանում էին հարավի կապույտ ծովափերը, այն
հարագատ վայրերը, ուր զմրուխտագեղ լեռները
հպարտ խոյանում են դեպի երկնի լազուրը և
ուր ամառային շողշողուն օրերին իսկ, անտառ-
ների մուգ կանաչն է մթնշաղում լեռնաթի-
կունք պիոներական ճամբարը։ Նրանց մտա-
պատկերում վերակենդանանում էին ճամբարա-
յին լուսնյակ գիշերները, երբ ծովամերձ կի-
պարիսների երկար ստվերներն էին ձգվում
ծովի ատաղացող ջրերի վրա։ Ու նրանց սիրտը
բաբախում էր բերկրանքից...

— Ա՜խ, այդ պլոնեբական ճամբարն ու գիշերային խարուլկները...

— Ռիմա, — շշնջաց Շուրան հուզումից մի քիչ բեկբեկուն ձայնով, — պատերազմը որ վերջանա, միասին Մոսկվա կգնանք սովորելու, այնպես չէ՞...

— Այո, — ուրախությունից թեթևացած սրտով պատասխանեց ընկերուհին։

Քաղցը մտորումների մեջ, ապագայի պայծառ հեռանկարներով ոգևորված՝ նրանք ավելի սեղմվեցին իրար։ Մի դուրեկան ջերմություն պատեց նրանց մարմինը, նրանց փոքրիկ սրտերը...

Ինչքան լավ կլինի կյանքը՝ հաղթանակից հետո։ Նորից եռուն առօրյա, նորից ուսում և ստեղծագործ աշխատանք։ Միայն թե շուտով ջախջախվեին կյանքի թշնամիները։

Պատանի ընկերներն իրենց ապագայի վարդագույն երազների մեջ ամփոփվելով՝ մի պահ նորից լռեցին։

Խավար անտառում լսվում էր միայն անձրևի միալար շփշփոցը։

Եվ երկյուղի ու բերկրանքի զգացումը համակել էր նրանց. երկյուղ՝ ֆաշիստների ձեռքն ընկնելու վտանգից և բերկրանք, որ որպես պարտիզաններ միասին գնում են լուրջ առաջադրանք կատարելու։

Լուսադեմին թեև անձրևը դեռ լրիվ չէր դադարել, բայց նրանք ճանապարհ ընկան և առավոտյան արդեն Զուլայումն էին։

Շրջկենտրոնում պատանի հետախույզների առաջին գործը եղավ արևածաղիկ և խնձոր գնել շուկայից։ Ապա հետևելով գերմանական զինվորներին, նրանք հասան կայազորի տեղավորված վայրը։ Այստեղ շենքերի առաջը, Շուրան և Ռիման մինչև ուշ երեկո արևածաղիկ և խնձոր վաճառեցին հիտլերականներին, միաժամանակ լավ ուսումնասիրելով կայազորի դասավորումը շենքերում, պահակության սիստեմը, գիշերային դադարքի ու քնի ժամը, զինապահեստի, գնդացիրների տեղը։ Նրանք իմացան նաև, որ ութ օրից հետո ֆաշիստական մեծ ոռն է լինելու։

— Այդ շատ կարևոր է, որ իմացանք,— ասում էր Շուրան իր ընկերուհուն, — ոռնի առթիվ նրանք լավ կխմեն և հարբած կլինեն։ Գրոհելու համար շատ հարմար օր կլինի այդ։

Ուշ երեկոյան, երբ պատանի հետախույզները ճանապարհ էին ընկնում, գերմանացի պահակը կանգնեցրեց նրանց։ Փախչել հնարավոր չէր. մանավանդ փախչելու փորձը կարող էր լուրջ կասկածներ առաջացնել արևածաղիկ և խնձոր «վաճառողների» նկատմամբ։

Շուրան և Ռիման ենթարկվեցին գերմանական պահակին, որը նրանց տարավ մոտակա պահակատունը՝ պահակապետի մոտ։

— Պարոն պետ,— հանկարծ պատանեկական համարձակությամբ և միամտությամբ դոչեց Շուրան, կանխելով պահակի զեկուցումը,— առավոտյան քրոջս հետ դյուղից խնձոր և արևածաղիկ էինք բերել, բոլորը վաճառեցինք· այժմ մութ է, գյուղ գնալ չի լինի, խնդրում եմ տեղ տվեք գիշերելու, առավոտյան կգնանք...

Պահակը զարմացավ։ Ուրեմն սրանք նույնիսկ չէին ուզում կայազորից դուրս գալ։

Պետը, որին զարթեցնելով անհանգստացրել էր պահակը, ջղայնանալով հրամայեց պահակին.

— Թող գիշերեն կողքի սենյակում, իսկ մնացյալը առավոտյան կպարզենք։

Լսելով պահակապետի այդ կարգադրությունը՝ ուրախությունից պայծառացան Շուրայի և Ռիմայի դեմքերը, մանավանդ, երբ կողքի սենյակը գնալով նկատեցին, որ լուսամուտը երկաթե ձողերով չէր պատած և ուրեմն այդ բանտարկության համար հատկացված սենյակ չէր։ Վատը միայն այն էր, որ միևնույն սենյակում մահճակալի վրա պառկել էր գերմանացի մի զինվոր, որը դժգոհ փնթփնթ-

թաց՝ իր քունը խանգարելու համար և, կողքի վրա դառնալով՝ նորից քնեց։

Շուրան և Ռիման միասին կծկվեցին մի անկյունում «քնելու», ծածկվելով դեռևի վրա ընկած վերմակով։

Դրսում խավար էր, լուռ։ Մեկ-մեկ միայն լսվում էր շրջող պահակի ոտնաձայնը, որը մոտենում էր լուսամուտին ու հեռանում։

Կես գիշերին սենյակումն էլ լույսը հանգավ։ Այդ շատ լավ էր։ Այժմ բաց լուսամուտից լսվում էր միայն նոր սկսած անձրևի խոշոր կաթիլների կաթահարումը թիթեղե տանիքի վրա։

Մահճակալին քնած հիտլերականը սկսեց խռմփացնել։

— Ռիմա, ժամանակն է,—շշնջաց Շուրան։

Նրանք անշշուկ վեր կացան, ոտների ծայրերի վրա մոտեցան լուսամուտին, հանեցին կոշիկները, որ թռչելիս ոչ մի ձայն չլսվի։ Առաջինը Շուրան կախվեց լուսամուտից և անշշուկ իրեն վար գցեց ցեխոտ գետնին. նրան հետևեց Ռիման։

Կես գիշերվա անթափանց խավարի մեջ ուժեղ անձրևի տակ, ձեռք-ձեռքի տված նրանք անցան պահականոցի մոտից։ Լսվեց հազի ձայն, որը երկու-երեք անգամ կրկնվեց։ Այդ ձայնը հետզհետև մոտենում էր պատանի հետախույզներին։ Նրանք

իրենց շատ մոտիկ, հազիվ ութ-տաս քայլ հեռավորություն վրա նկատեցին գերմանական ժամապահին, որը գրպանի լուսարձակով մերթընդմերթ լուսավորում էր իր շուրջը։ Անշարժ, շունչները պահած նրանք մեխվեցին ցեխոտ գետնին։ Նրանց անմիջապես մոտիկ խաղում էր գերմանական ժամապահի լուսարձակի լուսայունը և սպառնում հայտաբերել պատանի պարտիզաններին։ Ժամապահն առաջանում էր լույսի ուղղությամբ։ Եվս մի քանի քայլ և ահա գերմանացին կկոխոտեր նրանց։

Լուրջ վտանգի առաջ հետախույզները ավելի սեղմվեցին իրար։ Շուրան զգում էր Ռիմայի տաք շնչառությունը իր դեմքին։ Նրանք ավելի թաղվեցին ցեխի մեջ։ Շուրան մերկացրեց փոքրիկ դաշույնը, որ պահել էր իր գրպանում։

«Ես կռվի կբռնվեմ, իսկ Ռիման կփախչի, տեղ կհասնի և կզեկուցի մարտական առաջադրանքի կատարման մասին» — մտածում էր Շուրան՝ իր ափի մեջ ավելի պինդ սեղմելով դաշույնի կոթը։

Ժամապահն ավելի մոտեցավ և քթի տակ ինչ-որ մի երգ մրթմրթալով կանգ առավ։ Այնքան մոտիկ կանգ առավ, որ Շուրան արդեն բարձրացրեց դաշույնը գերմանացուն հար-

վածելու համար, սակայն, այդ վայրկյանին, գերմանացին նորից հագաց ու շրջվեց։ Ռիման և Շուրան փրկված էին։

— Վեր կաց, Ռիմա, փախչենք,— շշնջաց Շուրան։

Նրանք վեր կացան և անաղմուկ անհայտացան թանձր խավարի մեջ՝ իրենց ետևում թողնելով գերմանական ժամապահին։

*
* *

Պարտիզանների հրամանատարի առաջ ըզգաստ կանգնել էին երկու պատանի հետախույզ։ Նրանք ոտից մինչև գլուխ ցեխոտված ու թրջված էին. հոգնությունից ավելի էին գունատվել, սակայն այդ վայրկյանին նրանք իրենց զգում էին չափազանց երջանիկ. բերկրանքից վառվում էին նրանց աչքերը։ Զէ՞ որ հենց նոր Շուրան գեկուցել էր.

— Ընկեր հրամանատար, ձեր մարտական առաջադրանքը կատարված է...

Ու նա հակիրճ պատմել էր իրենց բոլոր տեսածների մասին, հատկապես շեշտել, որ ութը օրից հետո ֆաշիստական տոն էր լինելու։

Սակայն ոչ Շուրան և ոչ էլ Ռիման հրամանատարին չպատմեցին, թե ինչպիսի վտանգից էր փրկվել իրենց կյանքը...

Պատանի հետախույզների գեկուցումից հետո պարտիզանական շտաբում խնամքով մշակվեց գերմանական կայազորի վրա գրոհելու պլանը։ Որոշվեց շրջկենտրոնի վրա արշավել ֆաշիստական տոնի օրը։

... Խավար գիշերով Զուլայի անտառներից դուրս եկան պարտիզանները։ Տեղ հասնելով՝ նրանք նաև կտրեցին Զուլան մյուս շրջկենտրոնների հետ կապող բոլոր հեռախոսալարերը, ապա հատուկ ջոկատները նշանակեցին՝ հսկելու այն խճուղիները, որտեղից թշնամին կարող էր օգնություն հասնել թակարդի մեջ ընկած Զուլայի կայազորին։ Բնակավայրը շրջապատվելուց հետո, պաշարման օղակը հետզհետե սկսեց սեղմվել։

Ուշ գիշերին, տոնակատարությունը վերջացնելով, ֆաշիստները, հարբած, խոր քուն էին մտել։ Ճիշտ այդ միջոցին պարտիզանները, Շուրայի և Ռիմայի ուղեկցությամբ գրոհեցին գերմանական կայազորի վրա։ Անակնկալի եկած հիտլերականները ներքնաշորերով սկսեցին իրենց գցել զորանոցի լուսամուտներից դուրս՝ փրկություն փնտրելով փախուստի մեջ։

Պարտիզանները կրակում էին ավտոմատներից և ձեռքի գնդացիրներից։ Զորանոցի շուրջը ծածկվել էր հիտլերականների դիակ-

ներով։ Հանկարծակի գրոհով պարտիզաններն առանց դիմադրության ձեռք էին գցել թշնամու գնդացիրները, զինապահեստը և Շուրայի ուղեկցությամբ առաջացել էին այն շենքը, որտեղ տեղավորված էր շտաբը։ Այստեղ, սակայն, լուսամուտներից կրակեցին պարտիզանների վրա և նռնակներ նետեցին։ Մի քանի հոգի վիրավորվեցին։ Այդ միջոցին խավարի մեջ մի պահ անհայտացավ Շուրան։ Մի քանի րոպեից հետո լսվեց նռնակի երեք պայթյուն, և շտաբի լուսամուտներից հասավ վիրավորների աղաղակներ։ Այդ Շուրան էր, որ ձախ կողմից մոտենալով շենքին՝ իրար հետևից լուսամուտից ներս էր շպրտել երեք նռնակ։

Պարտիզանները գրոհեցին շտաբի վրա և առանց դիմադրության հանդիպելու գրավեցին այն։ Ծանր վիրավորվել էին այնտեղ գտնվող հինգ հիտլերականները։

Երբ Շուրան ներս մտավ սենյակ, վիրավոր գերմանացիներից մեկը հանեց ատրճանակը և կրակեց նրա վրա։ Առաջին գնդակը վրիպեց։ Գերմանացին կրակեց երկրորդ, երրորդ անգամ։ Վերջին գնդակով Շուրան վիրավորվեց ձախ թևից։ Այդ միջոցին ներս մտնող պարտիզանները վերջնականապես լռեցրին գերմանացուն և շտապ կապեցին Շուրայի վերքը։

— Արդյոք Ռիմային դժբախտություն չի պատահել, արդյոք նա էլ չի վիրավորվել — մտածում էր պատանի հետախույզը, երբ նրա կողքին հայտնվեց Ռիման։ Նա հուզված էր և չգիտեր ինչպես օգնել ընկերոջը։

— Շատ է ցավում, Շուրա, սիրելիս, շատ է ցավում, — շշնջում էր նա, դպչելով իր արցունքները։

Թեև կորցրած արյունից գունատվել էր Շուրան, բայց նա իրեն պահում էր շատ հանգիստ։

Վիրավորին մոտեցավ պարտիզանների հրամանատարը, մի պահ դիտեց պատանու դժգույն ու հյուծված դեմքը, հետո սրտի խորքից շնորհակալության ջերմ խոսքեր ասաց Շուրային և Ռիմային։

... Երկու ժամվա ընթացքում ոչնչացնելով կայազորը՝ պարտիզանները մեծաքանակ ավարով անտառ վերադարձան։

Հաջորդ օրը գերմանացիները տեղեկանալով Զույայի կայազորի ջարդվելու մասին շարժման մեջ դրին իրենց տանկերը։ Բայց՝ արդեն ուշ էր։ Նրանք Զույայում գտան միայն իրենց զինվորների դիակները։

ԴԱՎԱՃԱՆԸ

Մի անգամ ղրիմեցի երիտասարդ պարտիզան Մարտին Գրիգորյանը ֆաշիստական թեր-

թում կարդաց. — «Կոնսերվի գործարանն իր դիրեկտորի անձնվեր աշխատանքի շնորհիվ տարեկան պլանը կատարեց 150 տոկոսով, գերմանական բանակին տալով բարձր որակի մսեղենի պահածո»։

Փոթորկվեց Մարտինը. — «Դավաճան», — շշնջացին նրա շուրթերը։ Հետո նա ինչ որ բան մտածեց և իր մոքով խանդավառված՝ անմիջապես գնաց իր ջոկատի հրամանատարի մոտ, թե՝

— Ընկեր հրամանատար, թույլ տվեք քաղաք մեկնելու։

— Նորից ինչ կա, Մարտին։

Եվ Մարտինը պատմեց թերթում կարդացածը՝ կոնսերվի գործարանի դիրեկտորի մասին ու ավելացրեց.

— Ուզում եմ ձեզ մոտ բերել պլանները գերակատարող դավաճանին։

Ոգևորվելով Մարտինի մոքով՝ հրամանատարը բացականչեց,

— Давай,—Մարտին...

Կոմերիատական Մարտին Գրիգորյանը, շոֆեր-պարտիզան Վասյան և Շուրան գերմանական համազգեստ հագած՝ ճանապարհ ընկան դեպի քաղաք։ Տեղ հասնելով Շուրան իմացավ դիրեկտորի տան հասցեն։

Ուշ գիշերով երեք պարտիզանները գնացին դավաճանի տունը։ Մոտակա փողոցներից մեկում նրանք հանդիպեցին մի ավտոյի, որ գերմանացիներն անտեր թողնելով, հավանաբար գնացել էին խմելու։

— Այս մեքենան մեզ պետք է գալու, տես մեջը բենզին կա,—հարցրեց Մարտինն իր ընկերոջը։

Վասյան ստուգեց։ Ամեն ինչ կարգին էր, բայց առայժմ հրաժարվեցին մեքենայից։ Նախ անհրաժեշտ էր պարզել, թե դիրեկտորը տանն էր։

Նրանք երեքով մտան կոնսերվի գործարանի դիրեկտորի տան բակը։ Այդտեղ՝ բակում կանգնել էր գերմանական ավտոտիկայով մի մարդատար ավտոմեքենա։

— Այս էլ ստուգիր, ամեն ինչ կարգին է,—ասաց Մարտինը Վասյային։

Ստուգումից պարզվեց, որ մեքենայի մեջ բենզին կար և մեքենան սարքին էր։

Մաղաղ գիշերում վերևից՝ դիրեկտորի բնակարանի բաց լուսամուտից, խնճույքի աղմուկն էր տարածվում։ Հարբածների գոռում-գոչումների մեջ երբեմն լսվում էին գերմանուհու բարձրաձայն խոսակցության ձայներ։ Ուրեմն խնճույքին մասնակցում էին գերմանացիները և, ըստ

երևույթին, բակում կանգնած ավտոն նրանցն էր։

Շուրան վեր բարձրացավ. վարագույրի արանքից դիտում էր սենյակը։ Ընդարձակ, լավ կահավորված սենյակի ճիշտ կենտրոնում, սեղանի վրա դասավորված էին բազմատեսակ ընտիր ուտելիքներ։ Սեղանի մեջտեղը, մի մեծ ափսեի մեջ դրված էր տապակած, կարմրած խոճկոր, որ յուղոտությունից փայլում էր ուժեղ լույսի տակ, սեղանի զանազան մասերում՝ եփած ու բրինձ-քիշմիշով լցված հավեր, երշիկներ, տեսակ-տեսակ թթուներ, պահածոներ, մրգեղեն և ընտիր տեսակի խմիչք։ Կիսաբաց պատուհանից փչում էր խմիչքի և տապակած մսի դուրեկան հոտ՝ գրգռելով Շուրայի ախորժակը։

Սենյակում տիրող աղմուկից, ամանների մեջ կիսատ մնացած ճաշերից ու աղավաղված խոսակցություններից Շուրան եզրակացրեց, որ արդեն հարբել են տանուտերն ու իր գերմանացի հյուրերը, որոնցից մեկը բարձրաստիճան սպա էր։

Ներքև իջնելով՝ Շուրան զեկուցեց իր տեսածների մասին։ Վասյային մեքենայի մեջ թողնելով, Մարտինն ու նա երկուսով վեր բարձրացան։ Դիտում էին։ Դիրեկտորը՝ գինով լիքը բաժակը բարձր պահած՝ «գերմանական ան-

պարտելի բանակի» կենացն էր առաջարկում, բոլոր տեսակի ածականներով զոռելով՝ «գերմանական բանակի անընկճելի ուժն ու հզորությունը»։

Մարտինը զայրույթը հազիվ էր զսպում։ Նրա մեջ բուռն ցանկություն առաջացավ ավտոմատային մի կրակահերթով ոչնչացնել բոլորին, թուլ չտալ, որ դիրեկտորը խմի այդ կենացը։ Սակայն նա զսպեց իր այդ ցանկությունը։ Չէ՞ որ խոստացել էր իր հրամանատարին՝ դավաճան դիրեկտորին ողջ-ողջ անտառ տանել։

Մարտինի կողքին լուռ կանգնած՝ Շուրան դիտում էր սենյակը և մտածում, թե ինչպես որսալ գերմանական սպաներով շրջապատված դավաճանին։

Սակայն Մարտինն արդեն մտածել էր իր անելիքը։ — Դու սպասիր, — ասաց նա Շուրային և դուռը համարձակ խփելով սենյակ մտավ։ Շուրան շվարած սպասում էր, թե ինչ է պատահելու, ինչ է անելու Մարտինը։

Գերմանական ֆելդֆեբելի համազգեստով ներկայանալով՝ նա զինվորական պատիվ տվեց հիտլերյան հարբած սպաներին և բոլորից բարձրաստիճան սպայից թույլտվություն խնդրեց՝ պարոն դիրեկտորին դիմելու։

Ֆելդֆեբելի վերաբերմունքից շոյված՝ բարձրաստիճան սպան թույլատրեց դիմել դիրեկտորին։

Մարտինը թաթարերեն լեզվով տանուտերին ասաց.

— Պարոն դիրեկտոր, Ղրիմի առափնյա պաշտպանության իմ զինվորների կողմից եկել եմ խնդրելու, որ մեզ քիչ պահածո բաց թողնեք։

Դռան եռևից Շուրան լսում էր այդ խոստակցությունը և անհամբեր, ձեռքը սարճանակին սպասում, թե ինչ ելք էր ունենալու այդ հանդգնությունը։

— Ղրիմի առափնյա պաշտպաններիդ ամբողջ զործարանը մատաղ,—ծոր տվեց հարբած դիրեկտորը,—հիմա բաց կթողնեմ և՛ պահածո, և՛ խմիչք, որ խմեք ֆյուրերի կենացը,—հրապարտությամբ հայտարարեց նա և, հյուրերից ներողություն խնդրելով՝ Ֆելդֆեբելի հետ միասին դուրս եկավ սենյակից։

Նրանք իջան պահեստ, բացեցին դուռը և հինգ արկղ մրգեղենի պահածո ու մի արկղ էլ գինի դուրս բերելով՝ տեղավորեցին մեքենայի մեջ։

Երբ պարոն դիրեկտորը պատրաստվում էր բաժանվել իր գիշերային հաճախորդներից, որ-

պեսզի գնա շարունակելու խնճույքը, Մարտինն ատրճանակը դեմ տվեց նրա ճակատին և մեքենայի բաց դուռը ցույց տալով, ասաց.

— Մտիր, թե չէ կսպանեմ...

Շշմած դավաճանը՝ պարզ չկարողանալով պատկերացնել կատարվածը, ենթարկվեց «ֆելդֆեբելի» հրամանին։

Եվ գերմանական ավտոմատիկայով մեքենան արագորեն դուրս դալով քաղաքից, կես գիշերին մեկնեց Զուլայի անտառները, մինչ գերմանական ասաներն աղմկում էին դիրեկտորի բնակարանում, խմում ու ջարդում, սպասելով տանտիրոջը, որ դա և կենաց առաջարկի...

* * *

Լուսաբացին անտառում, դարավոր մի կաղնու տակ սարքված քողտիկի առաջ, պարտիզանական ջոկատի հրամանատարի դեմ դդաստ կանգնած էին Մարտին Գրիգորյանը, Վասյան և Շուրան։ Մարտինը զեկուցում էր.

— Ընկեր հրամանատար, մարտական առաջադրանքը կատարված է։ Հայրենիքի դավաճանը՝ հինգ արկղ պահածոյով և մի արկղ գինով՝ գտնվում է ձեր տրամադրության տակ։

ԺՈՂՈՎ՝ ԵՂԵՎՆՈՒ ՏԱԿ

Ձյան անծայրածիր սավանը ծածկել էր լեռները ու անտառները։ Օրը պայծառ էր։ Երբեմն թեթև քամի էր փչում ու եղևնիների մուգ կանաչ թաթերից մաղվում էր ձյան արծաթե փոշի՝ արևի ճառագայթների տակ կայծկլտալով։

Անտառի մարդիկ արտակարգ բերկրանքի մեջ էին։ Քիչ առաջ ռադիստ Գրիգորյանը նորից ոգեշնչող լուրեր էր ընդունել Սովետական զորքերի նոր հաղթանակների մասին։ Դրա համար այսօր արևն ավելի պայծառ էր թվում, երկինքն ավելի կապույտ, ընությունն ավելի կենսախինդ ու հմայիչ։

Այդ օրը պարտիզանական ջոկատի հրամանատար Սարոկայի քողտիկի մոտ, մեծ եղևնու տակ կոմերիտականները ժողովի էին հավաքվել։ Այնտեղ էին Կալան-Բայիրիում մղված դաժան մարտերում հերոսուհու կոչմանն արժանացած պատանի պարտիզանուհիներ Ռիմա Սվիրիդովան, Լյուբա Վեդուդան, հետախույզ Մարիա Ցեդչենկոն, Շուրա Բորիսովը, Հովհաննես Աբրահամյանը, Անատոլի Սմիրնովը, Նիկոլայ Գրիգորյանը, Վասյա Կուրաբյովը և ուրիշներ։

Օրակարգի առաջին հարցի՝ Հայրենական

Մեծ Պատերազմի ընթացքի մասին զեկուցեց պարտիզանների հրամանատարը։ Սովետական զորքերի նոր հաղթանակներով ոգևորված՝ նա այսօր խոսում էր առանձին ջերմությամբ։

Որպես կախարդական տեսիլք՝ բոլորի մտապատկերով անցնում էին դեպի արևմուտք արշավող մեր հերոսական զորքերի մարտաշարքերը, սովետական խոյընթաց տանկերն ու զրահապատ մեքենաները, բոլորի աչքերի առաջ փռվում էին ազատագրվող սովետական հողերը, քաղաքներն ու գյուղերը և երջանկությունից արտասվող սովետական մարդիկ, որոնք ազատագրվել էին ֆաշիստական գերությունից։ Եվ պատանի պարտիզանները, մոռացած կյանքի դաժան պայմանները, իրենց հոգու աչքերով տեսնում էին մեծ արշալույսը, որ շուտով պիտի ծագեր Ղրիմի չքնաղ լեռների վրա...

Անցան օրակարգի երկրորդ հարցին՝ Ռիմա Սվիրիդովայի և Ալեքսանդր Բորիսովի ընդունելությանը կոմերիտմիության շարքերը։

Նրանք կարճ ու անպաճույճ պատմեցին իրենց փոքրիկ կյանքի պատմությունը՝ դպրոց, պիոներական կազմակերպություն, պարտիզանական ընտանիք...

— Ընկերներ, ո՞վ է ուզում արտահայտվել,—հարցրեց ժողովի նախագահը։

Բոլորը լուռ էին՝ սիրո և հիացմունքի հայացքները հառած Ջոկատի ամենակրտսեր պարտիզաններին վրա։ Այդ հայացքներն ասում էին. — լեզուն անզոր է արտահայտելու մեր սերը դեպի Շուրան ու Ռիման, նրանք ապրում են միայն Հայրենիքի սիրով՝Հայրենիքի համար. կարելի է միայն հպարտանալ ու ոգեշնչվել այդ փոքրիկ պարտիզանների անսահման հայրենասիրությամբ...

Պատմել պատանի պարտիզանների մարտական գործերի մասին՝ այդ քիչ էր։ Ի՞նչ որ անպատմելի, ինչոր անարտահայտելի մի նվիրական զգացում էր համակել ու լռության դատապարտել բոլորին։

Այդ միջոցին պարտիզանների հրամանատարը հուզված՝ ոտքի ելավ. մոտեցավ Ռիմային և Շուրային, պինդ սեղմեց նրանց ձեռքն ու ասաց.

— Սիրելի Շուրա և Ռիմա, մեր պարտիզանական Ջոկատն ու միավորումը, մեր մեծ Հայրենիքը կարող են հպարտանալ ձեզանով. դուք արժանի եք Լենինյան կոմերիտմիության շարքերում լինելու...

Հրամանատարի այս խոսքերը բխում էին բոլորի սրտից։ Պատանի պարտիզանները ջերմորեն ծափահարեցին նոր ընդունված կոմերիտականներին։

Շուրան և Ռիման կանգնել ու երջանկությունից հուզված՝ ժպտում էին։

ԼԵԳԵՆԴ ԶՈԼՈՆԳԵ ՔԱՐԱՓԻ ՈՒ ԶՈՇՎԱԾ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ժողովից հետո, երբ պատանի պարտիզանները նորից հավաքվել էին ուսուցիչ Սմիրնովի շուրջը՝ նրանից որևէ հետաքրքիր պատմություն կամ հեքիաթ լսելու, Ռիման հարց տվեց, թե ճիշտ է արդյոք, որ դարեր առաջ Ղրիմի ծովափերին զոհվել են բազմաթիվ աղջիկներ, ինչպես նրան դեռ փոքր հասակում պատմել էր իր տատը։

— Դա հունական հին լեգենդ է, սիրելիս. ես հենց այդ լեգենդը հիմա կպատմեմ ձեզ,— ասաց Սմիրնովը և նստելով բարձր կոճղի վրա, մի պահ վերհիշեց ժողովրդական գեղեցիկ ստեղծագործությունը։

— Ծովի վրա բարձրանում է Զոլոնգե քարափը,— սկսեց նա,— Ղրիմի հարավային ծովափերին ձեզանից շատերը տեսած կլինեն նման անդնդախոր քարափներ։ Թռչուններն իրենց բույնն էին հյուսել այդ քարափի ծերպերում, կապույտ անդունդի վրա կախված ժայռերի արանքներում։ Արևի ճառագայթների տակ շողշողում էր Զոլոնգեն։ Ծովի ալիքները նետվում էին նրա վրա և աղով ծածկում դեպի

ոլևելք նայող վիթխարի ժայռերը։ Արևածագին նրանք փայլում էին ադամանդի պես։

Զար ու խորամանկ էր Էպիրի սուլթանի փոխարքան՝ վեզիր Ալին։

Նա ստրկություն բերեց, շատ վիշտ, շատ տառապանք պատճառեց մարդկանց։ Նրա հրամանով մի սոսկալի օր հազարավոր ազատասեր, խիզախ և ուժեղ պատանիներ դավադրաբար ընկան անհավասար մարտում՝ իրենց ժողովրդի անկախության և երջանկության համար։

Այդ մեծ դժբախտությունից հետո, հայրենիքի ազատության ու ժողովրդի երջանկության համար զոհված խիզախների քույրերը, երիտասարդ աղջիկներն ու հարսները հավաքվեցին Զոլոնգե քարափում, հագան իրենց ամենալավ, տոնական շորերը, սգո պար բռնեցին, տխուր երգեր երգեցին։ Ողբերգներից մեկը նրանք այսպես էին վերջացնում.

«Մնաս բարով, աշխարհ. մնաս բարով կյանքի ուրախություն։ Իմ հայրենիք, դուք այնքան դժբախտ ես։ Քեզ մնաս բարով առհավետ։ Մնաք բարով զուլալ ակնաղբյուրներ, ծաղկառատ ու մարմանդ հովիտներ, մնաք բարով, հայրենի սիգապանծ ու գմբուխտ լեռներ։ Ցամաքում ձուկը չի կարող ապրել։ Ավաներ։

դի վրա ծաղիկ չի ծաղկի։ Ազատ աղջիկը չի կարող ապրել ստրկության մեջ»։

Աղջիկները շուրջպար բռնած, այս երգը երգելով, արագ շրջում էին։ Երբ շրջան կազմողներից առաջինը մոտենում էր քարափի պռնգին, նա բաժանվում էր մյուսներից և ախուր երգը շուրթերին՝ գահավիժում ծովը։

Այսպես, մեկը մյուսի հետևից գոհվեցին բոլոր աղջիկները։ Իսկ նրանք շատ էին, բոլորն էլ երիտասարդ ու գեղեցիկ։

Զյունասպիտակ թևերով ճայերի երամները թռչում էին այնտեղ, որտեղ գոհվել էին ստրկության և իրենց սիրելիների ոչնչացման դեմ բողոքող գեղեցկուհիները։ Ծովաթռչունները լսել էին նրանց տխուր երգերը և ակամա էին եղել մեծ ողբերգությանը։ Նրանք խռովահույզ ծովերի վրայով չորս կողմ ցրվելով, իրենց թախծոտ ու սուր ճիչերով ամբողջ աշխարհին հաղորդում էին այն ողբերգը, որ այնքան հուզիչ երգել էին ինքնանահատակ աղջիկները Զոլոնդե քարափում...

. . . . . .

Լեգենդը վերջացել էր։ Բայց պատանի պարտիզանների հայացքը դեռ ուսուցչի շուրթերին էր։ Սպասում էին, որ դեռ նա պիտի շարունակի իր պատմությունը։

Մի պահ ուիրող լուռթյունից հետո՝ Ռիման հուզված հարցրեց.

— Բայց ինչու՞ անհպատակ զոհվեցին նրանք, երբ կարելի էր կռվել բոնակալների դեմ և մեռնել կռվում...

— Որովհետև այդ շատ հին լեգենդ է,— պատասխանեց Շուրան, նայելով Ռիմայի տամուկ աչքերին։

ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ՋՈԿԱՏԻ ՓՐԿԻՉԸ

Այդ քառասուներեք թվականի օգոստոսի 17-ին էր։

Կատաղի մարտերից հետո պարտիզանական երեք ջոկատ հանգստանում էին «Ցաման Դաշիի» ճամբարում։ Թվում էր, որ այս բարձրադիր ու անտառապատ տեղը ժամանակավորապես անվտանգ է։ Մի քանի օր անընդհատ, գիշեր-ցերեկ տևող մարտերից հոգնած և ուժասպառ՝ պարտիզանները քնել էին։ Պահակներ նշանակելուց հետո քնել էր նաև «Հանուն հայրենիքի» ջոկատի հրամանատար կոմերիտական Սաշա Վադնյովը։ Մի երկու ժամ հանգստանալուց հետո, երբ նա զարթնեց, ճամբարի շուրջը նկատեց կասկածելի շարժումներ։ Սաշան իսկույն կռահեց, որ ֆաշիստներն օղա-

կել էին պարտիզանական ջոկատներն ու լուսադեմին էին սպասում՝ գրոհելու համար։ Կացությունը չափազանց լուրջ էր։ Հարկավոր էր արագ գործել և գիշերային մթությունից օգտվելով դուրս գալ պաշարումից։

Այդ մասին էր մտածում հրամանատարը, երբ խավարի մեջ նրան մոտեցավ Ռիման և զեկուցեց, որ նկատել է ֆաշիստական զինվորներ ու լսել հրետանու անիվների ձայն։

Արդեն ամեն ինչ պարզ էր։ Մի քանի րոպեում ամբողջ ճամբարը ոտքի ելավ։ Այժմ պետք էր կանխել թշնամուն և անակնկալ կերպով նախահարձակ լինել։ Հրամանատարը կազմեց իր գործողության պլանը։ Դրան մեծապես օգնեց Ռիմայի զեկուցումը։ Նա աջ թևում, անտառային բարձունքի լանջերին էր նկատել թշնամուն և լսել անիվների ձայն։ Ուրեմն թշնամին ամրացնում էր աջ թևը, մտածելով, որ պարտիզանները փրկվելու համար կաշխատեն այդ բարձրադիր անտառի մեջ խորանալ։ Որոշվեց ձախ թևից թշնամուն հանկարծակի հարված հասցնել և հոտի ու կիրճի միջով շրջանց կատարելով՝ մինչև լուսաբաց դուրս գալ թշնամու թիկունքը։

Կես գիշերն անց էր։ Սաշան շտապում էր արագ կենսագործել իր պլանը։

Ձախից շեշտակի հարվածելով գերմանա-

ցիներին՝ նրան հաջողվեց այդ թուլլ մասից ճեղքել պաշարման օղակը։ Բացվեց փրկության ուղին։ Այդ ամբողջ հանդուգն գործողության ընթացքում Վադնյովն իր վրա ընդունելով թշնամու ամբողջ կրակը՝ ապահովեց մինչև վերջին պարտիզանի դուրս գալը գերմանացիների պաշարման օղակից։

Այդ օրվանից պարտիզանները կոմերիտական Սաշա Վադնյովին կոչեցին «Ցաման Դաշիի» հերոս։

... Քառասուներեք թվականի դեկտեմբերի 29-ից մինչև քառասունչորս թվականի հունվարի մեկը գերմանա-ֆաշիստական պատժիչ արշավախմբերն ընդհանուր հարձակում էին գործում Ղրիմը պարտիզաններից վերջնականապես մաքրելու նշանաբանով։

Ղրիմի թերակղզու կենտրոնական մասի բարձրավանդակը ծածկված է խիտ անտառներով։ Այդ անտառների լանջերում, Կալան-Բայիրի կոչվող տեղանքից 700 մետր հարավ-արևմուտք մի անգամ դիրք էին բռնել Սաշա Վադնյովի ջոկատի պարտիզանները։ Նրանք պաշտպանում էին պարտիզանական ամբողջ միավորման համար վճռական նշանակություն ունեցող № 884. 1 բարձունքը՝ անտառի մուտքը։

Աշնանային տերևաթափից անտառը մեր-

կացել էր։ Այդ չափազանց նպաստավոր էր ֆաշիստներին՝ մարտական գործողություններ ծավալելու համար։

Քաղցից ու ցրտից հյուծված ժողովրդական վրիժառուների մի փոքրիկ ջոկատ՝ Վադնյովի հրամանատարությամբ՝ լուսադեմին ընդունեց մարտը։ Ջոկատի վրա էր տեղում գերմանական յոթ հրետանային և հինգ ականանետային մարտկոցների կրակը։ Վերևից ռմբակոծում էր ավիացիան։

Տանկերի ետևից շուտով գրոհել սկսեց թշնամու հետևակի երկու գումարտակ։

— Թշնամին չպետք է անցնի, ոչ մի քայլ ետ,— լսվում էր Վադնյովի մարտակոչը։

Եվ, չնայած ծանր, անասելի ծանր պայմաններին, չորս օր ու գիշեր անընդհատ «Հանուն հայրենիքի» ջոկատի ռուս, ուկրաինացի, հայ, վրացի, ուզբեկ մարտիկները, Վադնյովի հրամանատարությամբ դյուցազնամարտեր մղեցին՝ ֆաշիստական մինչև ատամները զինված ոհմակների դեմ։

Թշնամին մեծ զոհեր էր տալիս, բայց նրան չէր հաջողվում ճեղքել պարտիզանների պաշտպանությունը և ճակատային գրոհով թափանցել անտառի խորքը։

Այդ օրերին անտառային բացատի վրա

երևաց գերմանական մի ինքնաթիռ, որը խոյ-ընթաց ցածրանալով՝ ցած գցեց մի մեծ պարկ։ Ոչ մի պայթյուն չլսվեց։ Արդյոք պարկի մեջ վտանգավոր որևէ սյուրպրիզ չկա՞ր։ Պարտիզաններն անհամբեր սպասում էին։ Հետո, նրանցից մեկը մոտեցավ բացատում գետնի վրա ընկած պարկին և դանակով բացեց բերանը։ Բացեց ու սարսափից ետ-ետ քաշվեց...

— Մարդակերնե՛ր, ոճրագործնե՛ր, — կրկնում էր նա՝ հուզմունքից դողալով։

Պարկի մեջ մի ալեհեր, սպիտակ մորուքով մարդ կար, միսն ու արյունն իրար խառնված։ Նրա մարմինը դեռ տաք էր, արյունը թարմ։ Ուրեմն պարկի մեջ կենդանի էր դրվել նա և մահացել էր գետին ընկնելուց հետո միայն։

Ի՞նչ էր նշանակում ֆաշիստական բարբարոսության այս նոր ձևը։

Պարտիզանները հավաքվեցին առեղծվածային պարկի շուրջը, տեսան ալեհեր ծերունու արյունաշաղախ դիակը։

Պարտիզաններից մեկի ուշադրությունը գրավեց պարկի մեջ երևացող արյունոտ ինչ-որ թղթեր։ Նա վերցրեց այդ թղթերից մեկն ու կարդաց.

«Սրա օրն է սպասում բոլոր պարտիզան-

ներին, բոլոր նրանց, ովքեր կկռվեն գերմանական անհաղթ բանակի դեմ»։

Այդ կարդալով՝ սպիտակամորուս պարտիզան Անաստաս Եգորիչը բռունցքը բարձրացրեց դեպի երկինք և դողաց հուզումից.

— Մենք չենք ների այս ոճրագործությունները, մարդասպանները, դահիճները, — լսվեց նրա կիսախեղդ ձայնը։

Շուրան և Ռիման լուռ կանգնել էին։ Նրանք երդվեցին վրեժ լուծել դահիճներից։

* * *

Գրոհի հինգերորդ օրը հիտլերականներն անդան այլ տակտիկայի։ Նոր ուժեր առաջ քաշելով՝ նրանք սկսեցին թևերից հարվածել և պաշարման օղակ ստեղծել № 884. 1 բարձունքի շուրջը։ Գերմանացիներն արդեն հրրճվում էին։ Պարտիզանների համար այլևս փրկություն չկար։

Սաշան ծանր դրության մեջ էր։ Ռազմամթերքը բոլորովին սպառվել էր, ավտոմատները մնացել էին առանց փամփուշտի, իսկ դրսից՝ մերձակա անտառում գտնվող պարտիզանական միավորման շտաբից՝ հնարավոր չէր փամփուշտ ստանալ և վերջին ճիգը ի գործ դնել՝ ջոկատը շրջապատումից դուրս բերելու համար։

Մռայլվել էին անտառի մարդիկ։ Նրանցից ամեն մեկը մտածում էր ողջ չընկնել թշնամու ձեռքը, ամեն մեկը մտածում էր ձեռնամարտ մղել և զոհվել՝ կռվելով մինչև վերջին շունչը։

Շուրան և Ռիման նստել էին գետնատնակում և միտք էին անում՝ ինչպես օգնել հրամանատարին, ինչպես դուրս գալ տագնապալի, անելանելի դրությունից։ Ուրեմն այստեղ, այս անտառում պետք է վերջանա իրենց ջահել կյանքը՝ առանց տեսնելու սովետական ժողովրդի մեծ հաղթանակը, որն այնքան մոտալուտ էր թվում նրանց։

Կես գիշերն անց էր, բայց պարտիզանական ջոկատի հրամանատար Սաշա Վադնյովն ու կոմիսար Նիկոլայ Կլանբարսկին անքուն էին։ Նրանք ընկել էին տանջալի մտքերի մեջ։ Լուսաբացին ինչով էին դիմադրելու գերմանացիների դրոհին։ Նրանց մոտ մնացել էր մեկական փամփուշտ՝ «անձեռնմխելի ֆոնդ», որը պահել էին ֆաշիստների ձեռքը կենդանի չընկնելու համար...

— Նիկոլայ, եթե մի քիչ փամփուշտ լիներ, ջոկատը կփրկվեր. մի քանի սկավառակ փամփուշտ, և մենք կճեղքեինք պաշարման օղակը, գիշերը մեզ կօգներ,— մռայլված ասաց հրամանատարը։

— Այդ լավ երազ է. այժմ մեզ մնում է

մեր վերջին զեկուցագիրը պատրաստել Հայրենիքին, մեր վերջին խոսքն ասել Առաջնորդին և հրաժեշտ տալ աշխարհին,— պատասխանեց կոմիսարը և մի պահ լռելուց հետո ավելացրեց.

— Բոլորին պետք է գինել սառը գենքով. գերմանացիներին հավատացնել, որ անձնատուր ենք լինելու, երբ նրանք կմոտենան, նեռվել վերջին ձեռնամարտի։ Այդպես էլ գրենք զեկուցագրի մեջ։

— Իսկ զեկուցագիրը ով կհասցնի Միավորման շտաբը,— մռայլված հարցրեց հրամանատարը։

— Փորձ կանի Ռիման։ Հույս ունեմ նրան կհաջողվի օղակից դուրս գալ։ Ժամանակ չկա, գրենք և գիշերով ճամբենք նրան։

Կոմիսարը մատիտը հանեց ծոցագրպանից՝ կարճ զեկուցագիրը՝ իրենց որոշումը գրելու համար։ Հրամանատարը ձեռքի փոքրիկ լապտերով լուսավորում էր կոմիսարին։ Կես ժամում նրանք գրեցին «վերջին զեկուցագիրը», ինչպես կոմիսարն էր վերնագրել։ Այդ զեկուցագիրը վերջանում էր այսպես. «մենք գիտենք, որ հաղթանակը մոտ է, մեր հայրենիքը պիտի ապրի ազատ և պիտի բարգավաճի՝ մեծ Ստալինի առաջնորդությամբ։ Այդ համոզմունքով՝ մենք

դիմավորում ենք մահը։ Մահ գերմանական դավթիչներին։ Թող երկար ապրի մեր ազատ հայրենիքը։ Երկար կյանք մեր հորը, մեր Ստալինին»։

Վայրկյանի ամբողջ լռությունը դմքին՝ Ռիման գետնափորում լուռ կանգնել էր հրամանատարի ու կոմիսարի առաջ և լսում էր իր սիրելիների մարտական վերջին առաջադրանքը։

— Իսկ պիտի կարողանա դժվարագույն այս խնդիրը կատարել,—հարցրեց կոմիսարը, նրա մազերի հյուսքի մեջ տեղավորելով գեկուցագիրը։

Հետո առանց պատասխանի սպասելու, Ռիմայի խոհուն հայացքից ապահովված, նա շարունակեց.

— Իսկ ինչպե՞ս փրկել մեր պարտիզանական ջոկատի օրագիրը, վերցնես քեզ հետ, բայց ուր թաքցնես ... Չէ՛, չէ՛, այդ կարող է վտանգել քեզ ... ավելի շուտ մենք օրագիրը կթաքցնենք մեծ կաղնու փչակի մեջ, իսկ դու մերոնց կհայտնես տեղը...

Դեռ կոմիսարը նոր էր վերջացրել իր խոսքը, երբ ոտնաձայն լսվեց գետնափորի վերևից և մի վայրկյան հետո գետնափորից ներս մտավ երեսը ամբողջովին ցեխոտված, գլխարկը մինչև ականջները իջած մի պատանի։ Նրա կոնակին

մի տոպրակ կաբ, որի ծանրության տակ դեռ հևում էր անծանոթ պատանին։

Այդ րոպեին մի ուրախ ճիչ արձակեց Ռիման և փաթաթվեց պատանուն։

— Շուրիկա, ողջ-առողջ հասա՞ր, Շուրիկա, բերեցի՞ր,—հարցնում էր նա բերկրանքից տրոփող սրտով։

Հրամանատարն ու կոմիսարը ճանաչեցին իրենց Շուրային։

Մի րոպե շունչ քաշելուց հետո՝ Շուրան ընդհատեց լարված լռությունը.

— Ընկեր հրամանատա՛ր, Միավորման հրամանատարը ձեզ առաջարկում է հենց այժմ անցնել գործի, ճեղքել թշնամու օղակը, խորանալ անտառի մեջ և միանալ իրենց ... ահա ձեզ փամփուշտ,—ավելացրեց նա, իր կռնակից ցած իջեցնելով ծանր տոպրակը։

Վադնյովը հափշտակեց փամփուշտով լիքը տոպրակը, հետո իր պարտիզանական ամուր բազուկների մեջ վերցրեց Շուրային, շշնջալով.

— Դու մեզ փրկեցի՛ր, դու մեզ փրկեցի՛ր, սիրելի Շուրա։ Մեր պարտիզանները, մեր Հայրենիքը երբեք չեն մոռանալու քեզ, անգին Շուրիկա...

«ԱՂՄԿԱՐԱՐ ՏՂԱՆ»

Զովաշունչ երեկոն իջել էր անտառի վրա, երբ Ռիման վերադառնում էր մարտական առաջադրանքը կատարած։

Կապտավուն շղարշով էին պատել կանաչ ծառերն ու թփուտները։ Անտառային կածանի եզրերին լրենց փոքրիկ, կապույտ աչիկներն էին բացել մանուշակները։

Ռիման քայլում էր արագ, բոլորովին անտարբեր բնության այդ գեղեցկություններին։ Հետո, բարձունքում, հին կաղնու տակ մի պահ կանգ առավ հանգստանալու։ Նա միտք էր անում։ Ինչքան գեղեցիկ է Ղրիմի գարունը։ Ամեն ինչ կանաչում է, ծաղկում, կյանքի հյութով լցվում։ Իսկ մարդիկ։ Մարդիկ հեծում են ֆաշիստական լծի տակ։

Մտքերով տարված, շարունակելով ճանապարհը, նա հասել էր Ալմա կայարանը, երբ հանկարծ նկատեց, որ գերմանական ոստիկանությունը շուրջկալ է կատարել և ինքն էլ գտնվում է շրջապատման մեջ։

— Ցույց տվեք ձեր փաստաթուղթը,— Ռիմայից կոպտորեն պահանջեց շիկամորուս մի ոստիկանապետ։

— Մոտս փաստաթուղթ չունեմ. ես եկել

էի բարեկամիս տեսնելու,—հանգիստ պատասխանեց Ռիման։

Աղջկա հանգստությունը չխաբեց ոստիկանապետին։ Եռ դառնալով, նա իր օգնականին հրամայեց.

— Վերցնել սրան։

Ռիմայի թևից բռնելով՝ կոպտորեն քարշ տվեց միջահասակ, դեղնավուն մազերով մի ավագ ոստիկան։

Այդ վայրկյանին ոստիկանի հայացքը հանդիպեց աղջկա տագնապալի հայացքին։

Ռիմայի սիրտը տրոփեց ուժգին։ Սա նա է, իրենց պարտիզանական ջոկատի անդամը, որ վաղուց էր անհայտացել։ Այո, այո, նա է. ոչ մի կասկած։ Նույն աչքերը, նույն հասակը, միայն այժմ չաղացած ու տարբեր հագուստով։ ... Ուրեմն նա՝ Սոյոպա Դենիսյուկը դավաճան է եղել, ֆաշիստական լրտես։ Ուրեմն նա կարող է մատնել պարտիզանական ամբողջ ջոկատը...

Արդեն մթնշաղն իջնում էր կայարանի վրա, երբ կալանավորված մի բազմություն սպասում էր գնացքի գալուն՝ Սիմֆերոպոլ փոխադրվելու համար։

Գնացքը կանգ առավ կայարանում և կալանավորներին սկսեցին լցնել վագոնի մեջ։ Ռիմային նույնպես հրելով՝ մտցրին վագոն։

«Այսքան էլ անշնորհքություն, ինչպես չկարողացա խուսափել շուրջկալից» — ինքնիրեն մեղադրում էր Ռիման։

Վագոնի մեջ խռնված մարդիկ մոայլ ընթքերի մեջ էին ընկել. նրանք ծխում էին անընդհատ՝ քուլա-քուլա արձակելով իրենց վրշտերը...

Բոպեներ էին մնում գնացքը մեկնելուն։ Այդ միջոցին նույն ավագ ոստիկանը, քրտնած ու ցասումնալի, մտավ վագոն, գտավ Ռիմային և հայհոյելով քաշ տվեց վագոնից դուրս։

Աղջիկը մի վայրկյան ցանկացավ թքել ոստիկանի երեսին ու գոռալ. — դավաճան, բայց...

Նրանք շտապ նեբքև իջան վագոնից ու առաջացան ամբոխի մեջ։ Մթությունն արդեն տարածվում էր կայարանի վրա։ Լեռնային խաղաղության մեջ հնչեց վերջին զանգը։ Գնացքն սկսեց դանդաղ առաջ շարժվել։ Այդ վայրկյանին ավագ ոստիկան Դենիսյուկը մեղմ գրկեց Ռիմայի մեջքից և կարեկից ու փաղաքշական ձայնով շշնջաց.

— Դե, հիմա չքվիր, անուշիկս, շուտ չքվիր. ցտեսություն և հաջողություն...

Ու նա շտապ բաժանվելով մոտեցավ դանդաղորեն ընթացող գնացքին և բարձրացավ վերջին վագոնի աստիճանի վրա։

Մի պահ Ռիման չհասկացավ, թե ինչ կատարվեց իր հետ։ Երազ էր այդ բոլորը, թե իրականություն։ Նա զգում էր միայն, որ երախտագիտության և ուրախության արցունքները էին թափվում իր աչքերից։

Թաց աչքերով նա երկար ու երկար դիտում էր գնացքի հետ մթնաշաղի մեջ անհայտացող ավագ ոստիկան Ստյոպա Դենիսյուկին և, որպես շնորհակալության նշան, իր փոքրիկ, սպիտակ թաշկինակն էր շարժում անհետացող գնացքի ետևից...

* * *

Խավար գիշեր։ Սիմֆերոպոլում թակեցին Սվիրիդովալի տան դուռը։

Ո՞վ կարող էր լինել այսպես անժամանակ։

Կասկածների մեջ՝ մայրը գնաց դեպի դուռը։

— Ո՞վ է։

— Ես եմ, մամա, շուտ բաց արա,— լսվեց աղջկա ցածր, հուզված ձայնը։

Մայրը չէր ուզում հավատալ։ Մթթե այդ իր աղջկա ձայնն էր։

Այն օրվանից, երբ Ռիման տունը թողել և գնացել էր պարտիզանների մոտ, արդեն մեկուկես տարի էր անցել, և, մեկուկես

տարի էր, որ ոչ մի կապ չուներ նրա հետ։ Մի անգամ լուր էր տարածվել, որ նա կենդանի չէ։ Պատմում էին, թե պարտիզանական ջոկատի և ֆաշիստական պատժիչ արշավախմբի միջև տեղի ունեցած արյունալի կռիվների ժամանակ Ռիման սպանվել է։ Եվ ինչքան արցունք էր թափել մայրը. քանի՜-քանի՜ դիշերներ էր անքուն լուսացրել Ռիմայի համար, որ ընդամենը 16 տարուն էր բոլորել։

Եվ ահա այժմ դռան ետևից կարծես իր աղջկա ձայնն էր լսում։ Հավատալ. արդյոք այդ մի քաղցր պատրանք չէ՞ր...

Մայրը լարեց լսողությունը։ Նորից կրկնվեց նույն ձայնը.

— Մամա, շուտ բաց արա, ես եմ, Ռիման...

Բերկրանքից ուժգին տրսփում էր մոր սիրտը։ Ինքնամոռացության մեջ դողդողալով՝ նա բացեց դուռը և աղջկան փաթաթվելով՝ լաց եղավ։

— Այլևս իմ մոտից ոչ մի տեղ չես հեռանա, չէ՞ Ռիմչկա, սիրելիս,— թախանձում էր մայրը, իր կրծքին պինդ սեղմելով կորցրած աղջկանը։

— Հանգստացիր, մամա հանգստացիր,— շշնջում էր աղջիկը, շոյելով իր վշտահար մոր գլուխը, երեսը, ձեռները։

Ապա մայրն աղջկանը պատմեց, թե ինչպիսի լուրեր էին շրջում, թե կռվի ժամանակ Ռիման սպանվել է, թե պարտիզաններից առհասարակ շատ քչերն են կենդանի մնացել։

Ուշ գիշեր էր, բայց մայր ու աղջիկ դեռ չէին քնել։ Մայրը հեռաքրքրվում էր ամեն ինչով։

Ռիման պատմում էր պարտիզանական կյանքից զանազան դեպքեր. թաքցնելով մահվան վտանգները և կյանքի այն դաժան պայմանները, որ նրանք անց էին կացնում անձրևների տակ, ձմեռվա ձյուներին ու սառնամանիքներին, հուճախ քաղցած։

Ապա Ռիման մորը հայտնեց, որ եկել է հատուկ խնդրով և երկու օրից հետո նորից մեկնելու է։

... Վաղ առավոտյան Ռիման տանից դուրս եկավ՝ հայրենի քաղաքը շրջելու։ Թեթև մշուշ էր իջել քաղաքի վրա և ամեն ինչ մռայլ էր երևում։ Մի քիչ առաջանալով, նա փողոցում հանդիպեց գերմանական պահակներով շրջապատված չորս կալանավորների, որոնք քայլում էին գլուխները բարձր պահած։ Նրանց յուրաքանչյուրի կրծքին մի տախտակ էր կախված «Partizan» մակագրությամբ։

Մի ցնցող սարսուռ անցավ Ռիմայի ամ-

բողջ մարմնով։ Ուրեմն սովետական այդ մարդկանց դեպի կախաղան էին տանում։ Կախաղան դնացող այդ պարտիզանների մեջ կար սակեհեր ու կապուտաչյա մի աղջիկ, որը հազիվ տասնութ տարեկան լիներ։ Թեև նա գունատ էր ու գեստապոյի տանջարաններում հյուծված, բայց քայլում էր խրոխտ ու հանդիսավոր։ Այդ կոմերիտուհի Վալենտինա Բրյուկովան էր՝ հռչակված պարտիզանուհին։ Նրա անմիջապես կողքից քայլում էր պարտիզան՝ կադրային զինվորական Աբրահամյանը։ Գեստապոյի նկուղներում անցկացրած տանջալի կյանքը խորը դրոշմվել էր նրա դեմքին, մազաղաթի նման դեղնեցրել ու չորացրել։ Հյուծված դեմքի վրա, սև խոռոչների միջից վառվում էին աչքերը ու նա ձեռքով վեր էր պահում կրծքից կախված ցուցանակը, որի վրա գրված էր մի բառ՝ «պարտիզան»։

Ռիման հետևում էր նրանց։

Պարտիզանների քայլերն ավելի հանդիսավոր դարձան։ Նրանք հեռագնահեռ դանդաղեցրին քայլերը և պարտիզանական երգի հզոր հնչյունները, որպես պայքարի և վրեժի կոչ, տարածվեցին Սիմֆերոպոլի վրա։ Հետո խզակոթի հարվածները լռեցրին երգի հուզիչ հնչյունները։

Նոր լուսացած փողոցով մի քիչ հա առաջանալով, դատապարտյալները հրապարակ դուրս եկան։ Ու նրանց աչքերի դեմ ուրվագծվեցին կախաղանի ճոճվող, օձաձևաբար օդակները։ Այդ ժամանակ նորից հնչեց պարտիզանների երգը։

Արցունքներն աչքերին Ռիման դիտում էր դեպի կախաղան գնացող պարտիզաններին։ Հետո, լուսաբացի խոր լռության մեջ, կախաղանից նրա ականջին հասավ մի հզոր, բայց կերկերուն ձայն.

— Մարդասպաններ, դահիճներ, ազատությունը չի կարելի խեղդել. ազատությունն անմահ է ... շուտով կգա Կարմիր Բանակը ... կգա Ստալինը ... Մահ գերմանական զավթիչներին...

Այդ պարտիզան Աբրահամյանի ձայնն էր։

Դահիճի սև ձեռքը կտրեց պարտիզանների կյանքը։ Նրանք արդեն ճոճվում էին օդում, բայց ժողովրդի հոգում շարունակում էին արձագանքել կախաղանի առաջ արտասանված բոցաշունչ խոսքերը.

— Մահ գերմանական զավթիչներին...

*
* *

Երեկոյան Ռիման գնաց իր դպրոցական ընկերներից մեկի Սերյոժա Մակարովի մոտ, որն աշխատում էր գերմանական պայթուցիկ նյութերի պահեստում։

— Սերյոժա,— ասաց նա,— դու ինձ պետք է օգնես։

— Ինչով։

— Պայթուցիկ նյութով։ Հենց վաղն անհրաժեշտ է։

Պարտիզանները որոշել էին պայթեցնել գերմանական զրահապատ գնացքը, որը երկու օրից հետո պետք է անցներ Սիմֆերոպոլով, սակայն պայթուցիկ նյութ չկար։ Ռիման խոստացել էր ճարել Սիմֆերոպոլի գերմանական պահեստներից և հենց դրա համար եկել էր քաղաք։

— Գիտես, Ռիմա, այժմ ինչքան խիստ է,— ասաց Սերյոժան՝ կարոտով դիտելով իր դրպրոցական ընկերուհուն,— գերմանական պահակ է շրջում պահեստի մոտ և պահեստից դուրս գալիս, գրպաններս խուզարկում են։

— Իմ պահանջածը, Սերյոժիկ, գրպաններումդ չես տեղավորի։ Հինգ-վեց կիլո է անհրաժեշտ։

— Հինգ-վեց կիլո՞։ այդ անհնարին է, սիրելի Ռիմա։

— Անհնարին ոչինչ չկա, Սերյոժա։ պահեստից ես եմ վերցնելու այդ բեռը։

— Ինչպե՞ս...

— Ինչպե՞ս։ Ահա թե ինչպես։

Ու Ռիման պատմեց իր հանդուգն ծրագրի մասին...

... Հետևյալ օրը, երեկոյան դեմ, գերմանական պահեստի առաջ երևաց վայելչակազմ, կապուտաչյա և ոսկեհեր, շատ դեռատի մի կին՝ փոքրիկ երեխան գրկին։ Արևից պաշպանվելու համար՝ նա ծածկել էր երեխայի դեմքը։

Մոտենալով գերմանական պահակին՝ գերմաներեն լեզվով նա խնդրեց թույլ տալ իրեն՝ մի քանի րոպեով ամուսնուն տեսնել։

— Կողմնակի մարդկանց խստիվ արգելված է պահեստ մտնել,— պատասխանեց պահակը, ուշադիր դիտելով այդքան գեղեցիկ, տակավին մանկական դեմքով մորը։

— Ես ներս չեմ մտնի, «սիրելիս», հենց այստեղ, ամիջապես դռան առաջը կխոսենք, շատ կարևոր ասելիք ունեմ,— խնդրեց մայրը։

Դեռատի կնոջ ժպիտն ու գերմաներեն խոսակցությունը մեղմացրին պահակի խստությունը։ Նա թույլատրեց։

Երբ պահակը թիկունքը դարձնելով ամուսիններին, մի քանի քայլ հեռացավ, մայրը երեխային մեկնեց հորը։ Բայց այդ միջոցին պահակը ետ նայեց։ Մայրը գունատվեց։

— Վերջացավ, ամեն ինչ վերջացա՞վ,— մտածեց նա։

Սակայն հայրը փրկեց դրությունը։ Նա հանդիստ համբուրեց երեխային, ծածկեց երեսը և սկսեց օրորել բազուկների մեջ։

Հետո, երբ պահակը մի քանի հաստատ քայլ արավ դեպի առաջ, Սերյոժային հաջողվեց իր նախօրոք պատրաստած երեխան անմիջապես փոխանակել իր գրկում եղած երեխայի հետ։

Պահեստի դռան առաջից հեռանալիս մայրը շնորհակալություն հայտնեց գերմանական պահակին և նորից ժպտաց։

Այդ րոպեին պահակն ավելի մոտեցավ դեռատի մոր սիրտը թպրտաց ուժգին։ Իսկ եթե հիմա գերմանացին բաց անի քողը՝ երեխային տեսնելու համար...

Այդ ծանր ու տագնապալի րոպեին պահակը մի հայացք գցեց դեռատի գեղեցկուհու աչքերի մեջ ու հարցրեց.

— Քնած է։

Երկյուղից նորից բաբախեց մոր սիրտը, բայց նա տիրապետելով իրեն՝ պատասխանեց.

— Այո, այժմ քնի ժամն է... վախենում եմ զարթնի, այնքան չարն է...

Ու նորից ցնցող մի սարսուռ անցավ մոր ամբողջ մարմնով։ Այդ միջոցին նա մի «սիրալիր» հայացք գցեց գերմանական պահակի վրա ու պատրաստվեց մեկնելու։

Պահակը գեղեցկուհուն մի քիչ էլ պահելու համար նորից հարց տվեց.

— Աղջիկ է, թե տղա...

— Տղա է, տղա ... և այն էլ այնքան ապ-ժկարար,— ժպիտը դեմքին պատասխանեց Ռիման և երեխայի խանձարուրով պարուրված պայթուցիկ նյութը գրկած՝ շնորհակալություն հայտնելով գերմանական պահակին՝ դանդաղորեն հեռացավ ռազմամթերքի պահեստից։

ԱՆՕՐԻՆԱԿ ԴԵՊՔ

Խավար գիշերին թեթև ու անշշուկ մի ուրվական էր շարժվում քաղաքի գլխավոր փողոցի վրա գտնվող գեստապոյի շենքի մոտ, որի առաջ միշտ շրջում էր ֆաշիստական ժամապահը։

Ուրվականը մոտեցավ գեստապոյի շենքից մի քանի մետր հեռու գտնվող նոր ծաղկած ակացիաներից մեկին, ձուլվեց նրա հետ։ Նա հետևում էր ժամապահի ոտնաձայնին։ Երբ ոտնաձայնը մի քիչ հեռացավ դռան առաջից, ուրվականը կարծես ծառից պոկվեց և արագորեն մտավ ժամապահի պաշտպանության հանձնված դռնից ներս։ Ոտների ծայրերի վրա նա թեթևորեն բարձրացավ սանդուխներից և մթության մեջ ճանապարհ գտավ դռան անմիջապես վերևը՝

դեպի երկրորդ հարկի մեծ պատշգամբը։ Այնտեղ նա արագորեն հանեց մեջքից փաթաթած մի երկար, կարմիր կտոր, այն ամրացրեց պատշգամբի երկաթե ճաղերին, հետո փակեց պատշգամբի դուռը, որի վրա կպցրեց մի թուղթ։ Ապա նա եկավ և մութ աստիճանները շոշափելով, անաղմուկ ներքև իջավ։ Նա կանգ առավ դռան առաջը, լսողությունը լարեց։ Լսվում էր ժամապահի ոտնաձայնը, որը մոտենում էր։ Ժամապահը մոտեցավ դռանը և կանգ առավ աստիճանի վրա. փոքրիկ ուրվականը կուչ եկավ դռան առաջը, և երկյուղից ուժեղ խփեց նրա սիրտը։ Ընդամենը մեկ մետր տարածություն էր նրան բաժանում գերմանական ժամապահից, մեկ մետր տարածություն կար կյանքի և մահվան միջև...

Այդ միջոցին ժամապահը մի քայլ ևս անցնելով դեպի ներս՝ լուսկին հանեց և վառեց ծխախոտի հատ գլանակը։ Մի ակնթարթ լուսավորվեց դռան առաջ թաքնված փոքրիկ ուրվականը, բայց գերմանացին ոչինչ չնկատեց։ Լույսը շլացրեց նրա աչքերը՝ պարզ տեսանելի դարձնելով նրա քնատ ու մռայլ դեմքը։

Նա հազաց, ինչ-որ բան մտածելով շրջվեց դեպի փողոցը և սկսեց քթի տակ մրթմրթալ գերմանական մի քայլերգ։

Դռան ետևում թաքնված փոքրիկ մարդը, որ մինչ այդ պահել էր շունչը, թեթև շնչեց, բայց երկյուղից տակավին տրոփում էր սիրտը։ Հանկարծ եթե նորից ետ դառնար ժամապահը ու մի քայլ ևս աներ դեպի մուտքը ... այդ կլիներ իր հանդուգն գործի ձախողումը, իր կորուստը։ Մի րոպե նա մտածեց բարձրանալ տեղից, թիկունքից անակնկալ հարվածել ժամապահին և ծլկվել խավարի մեջ։ Բայց զսպեց իր այդ վտանգավոր ցանկությունը։ Ինքը շատ փոքր էր, ուժասպառ, իսկ գերմանացին հաղթանդամ էր. հազիվ թե կարողանար նրան իր տեղից շարժել։ Տաղնապալի մտածումների մեջ փոքրիկ մարդը ավելի էր կծկվել դռան ետևում։ Բարեբախտաբար երկար չտևեց այդ տագնապը։ Գերմանացին դանդաղ ներքև իջավ մուտքի աստիճանից և ինքն իրեն փնթփնթալով դեպի անկյունն առաջացավ։ Այդ միջոցին մարդկային ուրվականը դուրս սողաց դռան ետևից, և, որպես տեսիլք արագորեն անհետացավ խավարի մեջ։

Անասող գիշերը լուսացավ։ Վաղ առավոտյան քաղաքի բնակիչներն անցնում էին գլխավոր փողոցով և գեստապոյի շենքի պատշգամբում պարզված կարմիր կտորի վրա կարդում սպիտակ տառերով

գրված մի տող, կարդում էին կրկին ու կրկին և չէին հավատում իրենց աչքերին։ Ինչպես թե, այն էլ գեստապոյի շենքի ճակատին։ Պատշգամբի հետևից ներքևում շրջում էր գերմանական ժամապահը, իսկ նրա գլխավերևում նման լոզունգ։ Եվ անցորդները չհավատալով իրենց աչքերին, նորից ու նորից էին կարդում այն՝ թաքուն հրճվանք զգալով իրենց սրտերում։

Այդ անցորդների մեջ էին նաև Ռիման և Շուրան, որոնք, արագորեն աչք նետելով լոզունգի վրա կեղծ հանգստությամբ անցան շենքի առաջով։

Ոչինչ չհասկանալով այս անօրինակ դեպքից, Ռիման նախ զարմացած աչքերով, հետո փսփսոցով Շուրային հարցրեց, թե ինչ էր նշանակում այդ, ով կարող էր բարձրանալ և նման լոզունգ կախել գեստապոյի շենքի պատշգամբից։

— Ես էլ չգիտեմ,—բերկրանքը կոկորդում սեղմելով պատասխանեց Շուրան։

Առավոտյան ժամը 8-ին գիշերային ժամապահը փոխվելիս՝ պետին զեկուցեց, որ իր ծառայության ժամանակ արտակարգ ոչ մի դեպք տեղի չի ունեցել։

Այդ մինչոցին պահակապետի ուշադրությունը գրավեց անցորդների ուշադիր հայաց-

քը՝ ուղղված դեպի պատշգամբը։ Գլուխը վեր բարձրացնելով նա նկատեց պատշգամբում պարզված մի կարմիր կտոր, որի վրա սպիտակ տառերով ռուսերեն մի քանի բառ էր գրված։

— Իսկ այդ ո՞վ է կպցրել։ Ի՞նչ բան է գրված այնտեղ,— զարմացած հարցրեց պահակապետը։

Ժամապահը ոչ մի բացատրություն չկարողացավ տալ։ Նա էլ ապշած դիտում էր պատշգամբում պարզված կարմիր կտորը, որի վրա իրեն անհասկանալի լեզվով մի տող էր գրված։ Իր հերթապահության ժամերին ոչ ոք վերև չէր բարձրացել, բայց ո՞վ էր կպցրել կտորը, ե՞րբ և ի՞նչ բան էր գրված վրան, ո՞չինչ, բացարձակապես ոչինչ չգիտեր։

Պահակապետն իսկույն կանչեց անցորդներից մեկին և պահանջեց թարգմանել ռուսերեն գրված տողը։ Անցորդ կինը զունատվեց։ Արդյո՞ք վտանգավոր խաղ չկար դրա մեջը։ Սարսափը համակեց նրա էությունը և կինն սկսեց կմկմալ։

— Ձեզ հրամայում եմ անմիջապես կարդալ և թարգմանել,— գոռաց գերմանական սպան։

Անցորդի ոտները դողացին և նա ցածր ձայնով, վախվխելով թարգմանեց.

«Մահ գերմանական զավթիչներին»։

Հանկարծակի ուժեղ հարված ստացածի նման՝ տեղում ցնցվեց գերմանական սպան։

Առանց մի բառ իսկ արտասանելու, գաղտած պահակապետն ուղղակի վազեց դռնից ներս, և մի ոստյունով երկու-երեք աստիճան բարձրանալով՝ հասավ պատշգամբը, որպեսզի անմիջապես պոկի իրեն իսկ սպառնացող այդ լոզունգը, սակայն պատշգամբի առաջ հասնելով, նա սարսափած կանգ առավ։ Նրա հայացքը դռան վրա հանդիպեց գերմաններն լեզվով գրված նախազգուշացնող մի մակագրության.

„Miniert“ («ականապատված է»)։

Գաղտած ու սարսափած պահակապետը մի ակնթարթում ետ դարձավ, անմիջապես աստիճաններից ցած սլացավ և հայհոյելով գնաց մոտակա պահականոցը՝ սակրավոր բերելու։

Այդ միջոցին արդեն աշխատանքի եկող դեսատպոյի աշխատակիցները կարդում էին ծածանվող լոզունգը և կատաղածից ապշած ու զայրացած վազում էին դեպի պատշգամբ՝ խայտառակությանը վերջ տալու համար, բայց դռան վրայի մակագրությունը կարդալով բոլորը սարսափած ետ էին քաշվում, մինչև որ երկու սակրավորներ եկան և պարզեցին, որ պատշգամբը ականապատված չէր, այլ միայն դուռը բաց չանելու համար էր գրված այդ սոսկալի մակագրությունը։

Այս անօրինակ դեպքը հենց նույն օրը կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ քաղաքում։

Երեկոյան Շուրայի մայրը հարևանից լսելով քաղաքն ալեկոծող հիշյալ դեպքի մանրամասնությունները՝ իր տղային պատմում էր, թե ինչպես գիշերը, պարտիզանական մի ամբողջ խումբ հարձակվել էր գեստապոյի շենքի վրա, գերմանական պահակին անհայտացրել, ազատել բազմաթիվ կալանավորների և վերջում էլ պատշգամբում «Մահ գերմանական դավթիչներին» լոզունգն ամրացնելով ու շենքը ականապատելով անհայտացել։ Ասում էին նաև, որ այդ չափազանց հանդուգն ու անօրինակ դեպքը կատարվել է ընդհատակյա կոմերիտական կազմակերպության ղեկավար Անատոլի Կոսուխինի ղեկավարությամբ։

Ու մայրը գովում էր ընդհատակի այդ անտեսանելի ու անորսալի մարդկանց անկախությաց հանդգնությունը։

Շուրան թաքուն հրճվանքով էր լսում մոր պատմածները և ինքնագոհ լռում։

. . . . . .

Երբ պարտիզանական ջոկատի հրամանատար Սաշա Վադնյովը մարտական առաջադրանքի կատարումից վերադարձող Շուրայից և

Ռիմայից տեղեկություն պահանջեց քաղաքում տեղի ունեցած անօրինակ դեպքի և նրա հեղինակների մասին, պատանի պարտիզանները լռեցին։

— Ուրեմն դուք ոչինչ չգիտե՞ք։

— Չգիտենք, ընկեր հրամանատար,— ցածր ձայնով պատասխանեց Ռիման, անհարմար ըզգալով, որ այդպիսի զգայացունց դեպքի կատարման օրն իրենք քաղաքում լինելով հանդերձ, ճշգրիտ ոչինչ չգիտեին, բացի ժողովրդի մեջ տարածված բազմատեսակ ենթադրություններից։

— Այդ ինչպիսի՞ հետախույզներ եք դուք, որ չգիտեք քանի՞ պարտիզան, ե՞րբ են հարձակվել գեստապոյի շենքի վրա։ Դե՛, հասկանալի է, դուք դեռ շատ չահել եք,— ասաց հրամանատարը՝ հատկապես շեշտելով վերջին բառերը։

Շուրան անհանգիստ շարժվեց տեղում՝ վիրավորված զգալով իրեն։ Հենց դրան էլ ձգտում էր հրամանատարը, որը նկատեց Շուրայի այդ շարժումը։ Ռիման էլ գլխահակ կանգնած՝ աչքի տակից դողունի դիտում էր ընկերոջը։

— Ուրեմն այդպես, ընկեր Շուրա,— կրկնեց Վադնյովը, առանձին շեշտ դնելով «այդպես» և «Շուրա» բառերի վրա։

Այդ միջոցին Շուրան բարձրացրեց գլուխը, մի վայրկյան նայեց Ռիմայի խոհուն դեմքին, հետո Վադնյովին դառնալով պատասխանեց.

— Թույլ տվեք զեկուցել, ընկեր հրամանատար. գեստապոյի շենքի վրա լոզունգ պարզողը եղել է ձեր ջոկատի պարտիզան Շուրա Բորիսովը։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՐԵՏԸ ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐԻ ՄՈՏ

Գերմանական սպայի և զինվորի համազգեստ հագած ու ավտոմատներով զինված յոթ հոգի երեկոյան իջան անտառից։

Ճանուղին դուրս գալով՝ նրանք նստեցին ավար վերցրած մի ավտոմեքենա և ճանապարհ ընկան դեպի Սիմֆերոպոլ։

Կես գիշերին տեղ հասան։ Ամբողջ քաղաքը քնել էր թանձր խավարի մեջ։

Ավտոմեքենան կանգ առավ քաղաքի արվարձաններից մեկում՝ երկհարկանի մի տան առաջ։

Գերմանական սպայի համազգեստով երիտասարդը ավտոյից առաջինը դուրս գալով՝ ուղղվեց դեպի տան մուտքը։ Սպային անմիջապես հետևում էր ավտոմատով զինված մի շատ երիտասարդ զինվոր։

Մոտենալով դռանը կանգնած պահակին, սպան գերմաներեն լեզվով հարցրեց.

— Պարոն գնդապետը քնած է։

— Այո՛, պարոն օբեր-լեյտենանտ,—պատասխանեց պահակը, դգաստ կանգնելով սպայի առաջ։

— Շտապ գեկուցագիր ունեմ ներկայացնելու,—ասաց օբեր-լեյտենանտը՝ ավելի մոտենալով պահակին։

— Պարոն գնդապետը հրամայել է իրեն չանհանգստացնել,—կարճ պատասխանեց պահակը։

— Իսկ տեղակալը, պարոն փոխգնդապե՞տը։

— Պարոն փոխգնդապետն էլ կողքի սենյակումն է քնած։ Անցեք առավոտյան, պարոն օբեր-լեյտենանտ։

Այս խոսակցության ժամանակ ավտոյից իջել էին մյուս հինգ ավտոմատավորները ևս և մոտեցել պահակներին։

Այդ միջոցին սպան, որ գերմաներեն սովորել էր դեռ դպրոցում, դառնալով ավտոմատավորներին՝ հրամայեց.

— Զենքերը վերցնել և հաուպտվախտ տանել այս երկու պահակներին՝ իրենց պարտականությունների կատարման մեջ թերանալու

համար։ Իսկ դուք երկուսով փոխարինեք նրանց՝ պարոն գնդապետի հանգիստ քունն ապահովելու համար։ Մյուս երկուսդ արթնացրեք պարոն փոխգնդապետին։

Ոչինչ չհասկանալով կատարվածից՝ պահակները ենթարկվեցին սպայի հրամանին։ Այդ միջոցին օբեր-լեյտենանտը դառնալով իր կողքին կանգնած պատանի ավտոմատավորին, ասաց.

— Իսկ դու հետևիր ինձ։

Եվ այսպես, գերմանական սպայի ու զինվորի համազգեստով ծպտված պարտիզան Վանո Իսրայելյանն ու Շուրա Բորիսովը մտան քաղաքի գերմանական պարեսի բնակարանը և զգուշ բաց արին ննջարանի դուռը։ Ալկոհոլի հոտը տարածվել էր ամբողջ սենյակում։ Լուսամփոփի կանաչ լույսի տակ նրանք տեսան մահճակալի վրա պառկած գնդապետին, նրա կողքին՝ ճարպակալած, ուռած աչքերով ու այտերով կնոջը, որը դռան բացվելուց զարթնած, խիստ զայրացած գոռգոռում էր.

— Ինչպե՞ս եք համարձակվում կես գիշերին մտնել իմ ննջարանը, ձեզ ո՞վ է թույլատրել, սրիկանե՞ր, ինչպե՞ս եք համարձակվում...

— Մի գոռաք, ազնվափայլ տիկին, կնիհարեք, ձեզ հանգիստ պահեք և շուտով կհաս-

կանաք, թե մեզ ով է թույլատրել, իսկ եթե ուզում եք անպայման գոռալ, ավելի շուտ ձեր հարգելի ամուսնու՝ պարոն գնդապետի ականջին գոռացեք, թող զարթնի, շտապ գործ կա,— ծաղրական տոնով ասաց Վանոն՝ Շուրային աչքով անելով, որ նա արթնացնի։

Մահճակալին մոտենալով՝ Շուրան ցնցեց պարեսի ուսը։

Ամիչքից արյունակալած աչքերը բացելով և իր կիսամերկ տիկնոջ կողքին տեսնելով գերմանական սպային ու զինվորին՝ պարեսը գազազած գոռաց.

— Ձեզ ով է թույլատրել կես գիշերին մտնել իմ ննջարանը, դուրս կորեք անմիջապես, դուրս...

— Մի ջղայնացեք, պարոն գնդապետ, ափսոս են ձեր ջղերը, իսկ դուրս գնալը, այնքան շուտ կգնանք, ինչքան շուտ դուք և ձեր հարգելի տիկինը կհագնվեք, — հանգիստ պատասխանեց Շուրան՝ զսպելով իր հոգու տագնապը։

Հետո լսվեց «օրեր-լեյտենանտի» սպառնական ձայնը.

— Ձեզ, պարոն պարեսս, և ձեր կնոջը երեք րոպե ժամանակ՝ հագնվելու համար։

Գնդապետը ցնցվեց, դողդողացին նրա

դեմքի մկանները ու նա մի վայրկյան հաբ-
ցական նայեց զարհուրանքից կծկված իր կնո-
ջը, ապա օրեր-լեյտենանտին և դինու ազդե-
ցությունից ուշքի եկավ։ Չէ՛, այս բոլորը ե-
րազ չէր։

«Ընկանք ծպտված պարտիզանների ձեռ-
քը»,— կայծակեց նրա գլխում, երկյուղի ուժեղ
սարսուռ պատեց նրա էությունը և սարսափից
մեծացան աչքերը։ Իսկ ինչ էր անում տեղա-
կալը, որտեղ էին կորել պահակները։

Անից դողդողալով գնդապետն ու իր տի-
կինն սկսեցին հագնվել։ Կնոջ ատամները կտ-
կտկում էին՝ ինչպես սառնամանիքից ու նա
զարհուրած աչքերով պաշտպանություն էր
փնտրում՝ իր «ամենազոր» ամուսնուց...

— Ձեր վերարկուներն էլ վերցրեք, ուշ
դիշեր է, չլինի ճանապարհին մրսեք.— քմծի-
ծաղով ասաց Շուրան։

Նրանց բարձրացրին բեռնատար ավտոյի
վրա։ Վանոն հրամայեց.

— Այժմ, պարոն պարեռ, ձեր տիկնոջ և
տեղակալի հետ պառկեցեք այստեղ և շարու-
նակեցեք ձեր ընդհատված քունը։ Տեղ հաս-
նելիս՝ մենք կարթնացնենք ձեզ, անհոգ կա-
ցեք...

Նրանք ենթարկվեցին հրամանին.

Մի քանի բոպեից հետո, Սիմֆերոպոլ քաղաքի գերմանական պարետը, նրա կինն ու տեղակալը՝ պարտիզաններով շրջապատված՝ սլանում էին Զուլյայի անտառները։ Իսկ մի քանի օրից հետո պարոն պարետն ինքնաթիռով փոխադրվեց Ուկրաինական չորրորդ ռազմաճակատի հրամանատարության շտաբը։ Կատարվեց մարտական կարևորագույն առաջադրանքը, որ ռազմաճակատի հրամանատարությունը դրել էր պարտիզանական միավորման վրա՝ բարձրաստիճան սպա որսալու և երեք օրում իրենց հասցնելու մասին։

Ղրիմի թերակղզու վրա հարձակվող Կարմիր Բանակի համար զնդապետը արժեքավոր տեղեկություններ տվեց Ղրիմում եղած գերմանացիների ուժերի և պաշտպանության սիստեմի մասին։

Ուկրաինական չորրորդ ռազմաճակատի հրամանատար գեներալ Տոլբուխինը հատուկ շնորհակալական հեռագիր ուղարկեց պարտիզանների Հյուսիսային միավորման շտաբին՝ իրեն այդպիսի արժեքավոր «լեզու» գտնելու համար։

ՀԱՂԹԱՆԱԿ

Մեծ կաղնու տակ, քարափներից վերև տեղավորված պարտիզանական ռադիոկայանը

գիշերային խոր խաղաղության մեջ նորից ընդունեց Կրեմլի զանգերի բերկրալի զողանջը և ապա դիկտորի առնական ձայնը, թե՝ մի քանի րոպեից հետո կարևոր հաղորդում է լինելու։ Մի խումբ պարտիզաններ, նրանց թվում Շուրան և Ռիման շրջապատել էին ռադիոապարատը և սրտատրոփ սպասում էին Հայրենիքի ձայնին։ Արդյոք նորից ինչ հաղթանակի մասին էր հաղորդելու Մոսկվան։ Արդյոք որ ճակատից...

Եվ ահա, անտառային խոր լռության ու խավարի մեջ լսվեց դիկտորի հարազատ ձայնը, որը լուսավորեց և հուզեց անտառի մարդկանց սրտերը։ Համառ մարտերից հետո ուկրաինական չորրորդ ռազմաճակատի զորքերը Պերեկոպում ճեղքել էին գերմանական ամրությունները և հաղթականորեն առաջ էին շարժվում։ Վերջապես վրա էին հասել պարտիզանների այնքան երազած օրերը։

Անտառի մարդկանց խիստ, արևից խանձված դեմքերը պայծառացել էին։ Անպարփակ ուրախությունից նրանք կարծես գինովացել էին։ Ամեն մի քողտիկում ու գետնափորում, ամեն մի ծառի տակ ցնծություն ու տոն էր...

Ռիման և Շուրան չէին բաժանվում շտաբի ռադիոապարատից։

Ահա, ձեռքում մի փոքրիկ թուղթ՝ ռադիո-

հաղորդման ապարատին մոտեցավ պարտիզանների Հյուսիսային միավորման ռադիստ Նիկոլայ Գրիգորյանը։ Անսահմանորեն ուրախ տրամադրությամբ նա հաղորդեց վերջին ռադիոգիրը.

«Ալո, ալո, խոսում է Զույայի անտառների պարտիզանական ռադիոկայանը, խոսում է Զույայի անտառների պարտիզանական ռադիոկայանը...

Զույայի պարտիզանական ռադիոկայանը դադարեցնում է իր աշխատանքը։ Հեռանում ենք Զույայի անտառներից. կտրում ենք նահանջող թշնամու ճանապարհը՝ Կարասու Բազար—Սիմֆերոպոլ ու Բախչիսարայ—Սիմֆերոպոլ շրջանում։ Գրկաբաց սպասում ենք Կարմիր Բանակի գալստյանը»։

Եվ կես գիշերին պարտիզանական հեղեղը անտառային բարձունքներից հոսեց դեպի ներքև, դեպի հովիտները ու խճուղիները, որտեղից գերմանական զորքերն շտապում էին Ղրիմի ծովափը՝ այնտեղից անպատիժ փախչելու հույս ունենալով։

Կարասու Բազար—Սիմֆերոպոլ խճուղու վրա Հյուսիսային միավորման պարտիզաններն անակնկալ հարձակում գործեցին գերմանական նահանջող հետևակի վրա։ Կատաղի կռիվ բորբոքվեց։

Պարտիզանների երկաթե օղակի մեջ ընկած հիտլերականներն անձնատուր եղան։

Լուսաբացին միայն պարզ երևաց, թե պարտիզանները ինչ էին կատարել գիշերը։ Թշնամու հարյուրավոր դիակներ փռված էին խճուղու վրա և մերձակայքում։ Բազմաթիվ վիրավորներ ընկել էին գետնին։ Կոմերիտական ուսուցիչ Սմիրնովը մի պահ լուռ դիտելով գերմանացիների դիակները՝ կողքին կանգնած Շուրային և Ռիմային ժպտալով ասաց.

— Եվ սրանք բոլորը գրկվեցին «գերմանա-ռուսական համատոտ բառարանի» իրենց բառապաշարն օգտագործելուց... Այլևս վերջնականապես անպետքացան այդ բառարանները... Բայց,—շարունակեց նա,—դրանով միայն հընարավոր դարձավ, որ մենք ինչպես հարկն է օգտագործենք «Ռուս-գերմանական ընդարձակ բառարանը»՝ Գյոթեին ու Շիլլերին, Հայնեին ու Ցվայգին բնագրով կարդալու համար։ Այդպիսին է պատմության օրենքը...

... Դրանից մի քանի օր անց՝ Զույայի անտառների պարտիզանները ողջագուրվեցին Սիմֆերոպոլն ազատագրած Սովետական Բանակի հաղթական զորամասերի հետ։

Հաղթանակ։ Ինչքան երգ ու նվագ, ինչքան բույր ու երանգ, ինչքան ջինջ ու անապ երջանկություն կա այդ մի բառի մեջ...

Այդ մասին էին մտածում հաղթանակող մար-

դիկ, երբ կարմիրբանակայիններին միջից շտապ առաջ անցավ թավ բեխերով, հատ, մացառուտ հոնքերով, հիանալի, թիկնեղ մի ռազմիկ և արագորեն մոտենալով զինվորներով շրջապատված Շուրային՝ ամուր բազուկներով գրկեց նրան։ Դողդողում էին նրա սև բեխերը և նա, աչքերը խոնավացած, շշնջում էր.

— Իմ լավ Շուրա՛, իմ պարտիզան, հերոս զավակս...

Զորս տարվա բաժանումից հետո՝ հայրն ու որդին հանդիպում էին իրար։

* * *

... Ղրիմում նորից պարզվեց հավերժապես պայծառ ու կախարդական մի առավոտ, նորից մարդկանց սրտերը լցվեցին չինչ ուրախությամբ և արևի փայլուն ճառագայթների մեջ լողացող թռչունների դալարը նորից անձրևեց կապտամշուշ թերակղզու վրա...

Ղրիմի ազատագրման մայիսյան այս անմոռանալի օրերին, ահա, հավաքվել են պարտիզանները՝ վերջին հրաժեշտի համար։

Երկու տարվա դաժան կռիվները՝ գերմանական գավթիչների դեմ, կյանքի ծանր պայմանները՝ Զուլալի անտառներում՝ եղբայրացրել, միասնական անբաժանելի ընտանիք էին

դարձրել անտառի այս մարդկանց։ Դրա համար այնքան հուզիչ ու սրտառուչ էր հրաժեշտի այս հանդիպումը։

Միավորման հրամանատարը սրտի խորքից բխող նվիրական ու անկեղծ խոսքեր ասաց իր պարտիզաններին, որոնց անձնազոհ ու հավատով լի գործերը երբեք չի մոռանա մեր մեծ հայրենիքը...

Նա հիշատակեց բազմաթիվ հերոսների անուններ – Իվան Ֆեդչենկոյին, Սաշա Վեդուգային, Գևորգ Նաչինյանին, Իոսիֆ Նինոշվիլուն և դեռ շատերին, որոնք ընկան գերմանական գավթիչների դեմ մղված անհավասար մարտերում, իրենց մուրազը սրտերում, հաղթանակի այս արևաշող օրը չտեսած... Հիշեց բազմաթիվ հերոսների, որոնք տեսան հաղթանակի արևածագը՝ թերակղզու վրա...

Բոլոր պարտիզանները լուռ լսում էին սիրելի հրամանատարին, որն իրենց հետ միասին, հավասարապես բաժանել էր պարտիզանական կյանքի դառնությունները և ուրախությունները, որն ամենամռայլ օրերին իսկ հաղթանակի հավատ և ուժ էր ներշնչել՝ սովից հյուծված ու սառնամանիքներից ոսկրացած անտառի մարդկանց...

Պարտիզանների Հյուսիսային միավորման հրամանատար Ցամպոլսկին հայրական գուրգուրանքով դիտում էր իր զավակներին, որոնցից պետք է բաժանվեր այժմ Ղրիմի ազատագրումից հետո։

—Սիրելի և թանկագին ընկերներ,—հուզված ասաց նա վերջում,— Ռազմաճակատի հրամանատար գեներալ Տոլբուխինից այսօր մի հեռագիր ստացվեց շտաբում, որը թույլ տվեք այժմ կարդալ։

Ու շտաբի պետ Գրիգոր Սարգսյանից վերցնելով հեռագիրը՝ խոր լռության մեջ կարդաց.

«Գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում բացառիկ անձնազոհություն և խիզախություն հանդես բերելու համար, Կարմիր Դրոշի շքանշանով պարգևատրում եմ պատանի պարտիզաններ Ալեքսանդր Բորիսովին և Ռիմա Սվիրիդովային»։

Այդ վայրկյանին պարտիզանական ամբողջ կոլեկտիվը մի մարդու նման բարձրացավ տաքի և երկար—երկար որոտացին ծափերը։ Մի քանի պարտիզաններ մոտեցան Ռիմային և Շուրային ձեռքերի վրա բարձր պահած՝ բերին հրամանատարի առաջ։ Նորից ծափերի տարափ տեղաց և լսվեցին սրտաբուխ բացագանչություններ.

— Ուստ Միավորման պարծանք Շուրային և Ռիմային։

— Կեցցեն հայրենիքի արժանավոր զավակները։

— Հաջողություն ենք ցանկանում ձեզ, սիրելիներ,—լսվեց «Մուդրեցի» բանը ձայնը։

Նույն պահին հրամանատարը մոտեցավ նախ Ռիմային, համբուրեց նրան՝ շնորհավորելով բարձր պարգևը, ապա մոտեցավ Շուրային, նրան վերցրեց իր հայրական ամուր բազուկների մեջ։ Եվ շրջապատող պարտիզանները տեսան, որ խոնավացան հրամանատարի աչքերը ու նա մի պահ չկարողացավ խոսել...

— Շուրա, սիրելիս,—հետո ասաց հուզական ձայնով,—դու ապացուցեցիր, որ արժանավոր հոր արժանավոր զավակն ես։ Մեր պարտիզանները միշտ կհիշեն քեզ՝ իրենց փոքրիկ հերոսին... Շնորհավորում եմ՝ կառավարական բարձր պարգևի համար...

Հրամանատարը տակավին ուզում էր շարունակել իր խոսքը, բան ասել, բայց չէր կարողանում։ Այդ զգում էին զրուխները դեռին խոնարհած երկու պատանիները և նրանց հետ միասին՝ շրջապատող բոլոր պարտիզանները։

— Շուրկա, Շուրոչկա,—վերջապես դողդողաց հրամանատարի ձայնը,—շնորհակալություն նաև այն փոքրիկ ծանրոցի համար...

Ու այլևս ոչինչ չկարողացավ ասել։ Նորից իր սրտին սեղմեց Շուրային և արտասուքի երկու խոշոր կաթիլներ գլորվեցին նրա այտերով...

Բոլորն անշարժ, գուրգուրալի հայացքով դիտում էին հերոսներին։ Կարծես երկար ժամանակ նրանց չէին տեսել և այժմ իրենց հայրական կարոտն էին առնում։

Հանկարծ, հուզական լռության մեջ լսվեց մի ուրախ բացագանչություն։

— Դե՛, ապա՛ մի ողջագուրվեք տեսնեմ, զավակնե՛ր, ապա՛, ապա՛...

Եվ թավ բեխերը դողացնելով՝ պարտիզանների մեջից նրանց մոտեցավ քեռի Սավչուկը։

Նրա այդ հոգեբուխ պահանջը նաև պատանի պարտիզանների սրտի թաքուն ցանկությունն էր։

Այս սրտառուչ պահին Շուրան իր դեմքին զգաց Ռիմայի ջերմ, ջերմ ու դուրեկան շունչը և առաջին անգամ նրանց շրթունքներն իրար հանդիպեցին... Շուրան մեղմ շշնջաց.

— Ռիմա՛, սիրելիս, գնու՞մ ենք Մոսկվա սովորելու, այնպես չէ՞...

— Այո՛, այո՛, սիրելիս։

— Շնորհավորում ենք հաղթանակները, շնորհավորում ենք,—նրանց խոսակցությունն ընդհատեցին բազմաթիվ ձայներ։

Եվ նույն միջոցին երկու պատանի ընկերները զգաստ պատվի առնելով ավագ պարտիզանների առաջ՝ բարձրաձայն արտասանեցին.

— Ծառայում ենք Սովետական Միությանը...

ՂՐԻՄ, ԹԵՈԴՈՍԻՍ.
1945 թ. ՀՈԿՏ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հանդիպում խորհրդավոր ուղևորի հետ 3
2. Պարտիզանական ընտանիքում 17
3. Անհայտացում 28
4. Թշնամու օղակում 33
5. Հետախուզություն և գրոհ 41
6. Դավաճանը 52
7. Ծողով եղևնու տակ 59
8. Լեգենդ Զոլոնգե քարափի և զոհված աղջիկների մասին . 62
9. Պարտիզանական ջոկատի փրկիչը 65
10. «Աղմկարար տղան» 75
11. Անօրինակ դեպք 86
12. Գերմանական պարեսը պարտիզանների մոտ 94
13. Հաղթանակ 99

Պատ. խմբագիր՝ ԱՐԱՔՍ
Տեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎՖ 03254 Պ. 192։ Տիրաժ 4000։ 6¾ տպ. մամ. հեղ. 5 մամ։
Հանձնված է արտ. 23/VI 47 թ. Ստորագրված է տպ. 10/VIII-47 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի փ. № 65, 1947

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0040935

գինը 6 ֆր.

A I 5592